




Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Մտեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a **Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported** (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

- Share** — copy and redistribute the material in any medium or format
- Adapt** — remix, transform, and build upon the material



ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՄԱՍՆԱՃՅՈՒՂ

ՊՐՈՖԶԱՐԺՄԱՆ
ՀԵՌԱԿԱ ԻՆՍՏԻՏՈՒՏ

Ա. ԶՄԵՈՒՂ

ՊՐՈՖՄԻՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ՄԱՐԳՍ-ԼԵՆԻՆՅԱՆ
ՈՒՍՄՈՒՆՔԻ ՀԻՄՈՒՆՔՆԵՐԸ

331-88
9-70

ՊՐՈՖԶՐԱՏ 1982

115 JAN 2010

331-88

2-70

Ս. ԶՄԵՈՒԼ

ՊՐՈՖԵՍՈՐՆԵՐՆԵՐԻ
ՄԱՐԲՍ-ԼԵՆԻՆՅԱՆ
ՈՒՍՄՈՒՆՔԻ ՀԻՄՈՒՆՔՆԵՐԸ

Հ.Յ.Յ.Յ.
81

ՊՐՈՖԶՐԱՏ

1982

1 3 APR 2013

24457



3 8015. 02

ԽՍՀՄ ԱՐԿԵՍՏԱԿՑԱԿԱՆ ՇԱՐԺՄԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ¹⁾

ՆԵՐԱԾԱԿԱՆ ԱՌԱՋԱԴՐՈՒԹՅՈՒՆ

(Ի. ԶԻԲԻՆԻ ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՄԲ)

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Ներկա առաջադրությամբ մենք սկսում ենք ԽՍՀՄ արհիարժման պատմության կուրսը:

Մեր կուրսի խնդիրն է՝ 10-11 առաջադրության մեջ չարադրել արհեստակցական շարժման տեսությունն ու պատմությունը, բայց չեղծել կողմից մասսաների համար մղած պայքարի փորձի հիման վրա ցույց տալ, թե ինչպես են բայց չեղծի հիմնական գրություններն ու ճշտված արհիարժանները դրա ցույց տալ արհիարժանների մասին Մարքսի, Լենինի և Ստալինի տված հաստատուն տեսությունից: Այդ տեսության հիման վրա մենք կաշխատենք լուսարանել արհեստակցական շարժման պատմությունը առանձին եռամսյակներում, սերտորեն չափապելով կուսակցության գլխավոր դժի, ներկա որվա խնդիրների հետ, արհիարժանների գործնական աշխատանքի խնդիրների հետ սոցիալիստական շինարարության պայմաններում, վերաբերվել տեսությունը նպատակ ունի սրահալիներին տալու «կողմնորոշման» ուժ, պարզություն, հեռանկարներ, վստահություն աշխատանքի նկատմամբ, մեր գործի հաղթանակի հավատը» (Ստալին):

Տեսության նշանակությունը հատկապես ամփելանում է ներկա պայմաններում:

Խորհրդային Միության սրտիտարիատը-համաշխարհային սրտիտարիատի այդ հարվածային բրիգադը-կուսակցության և նրա լենինյան կի-ի ղեկավարում:

¹⁾ Արհիարժանների IX համագումարի փորձումների մասին մանրամասն լուսարանություն չի տրվում, քանի վեր հետեվյալ բրոշյուրը ամբողջապես նվիրվելու չի արհիարժանների IX համագումարի փորձումներին: (Հեղինակ)

թյամբ ձեռք ե բերել համաշխարհային-պատմական նշանակություն ունեցող հաղթանակ մենք թևակոխել ենք սոցիալիզմի շրջանը, ավարտել ենք սոցիալիստական եկոնոմիկայի հիմքի կառուցումը և հաջողությամբ պայքարում ենք առաջին հնգամյակի չորրորդ, ավարտական տարվա պլանի կատարման համար: Կապիտալիստական աշխարհը միևնույն ժամանակ դնում է համաշխարհային տնտեսական ճգնաժամի հետագա խորացման, լինդարձակման և սրման ճանապարհով: Համաշխարհային արդյունաբերական արտադրանքը 1931 թվականի վերջին նվազեց 30-35 տոկոսով 1929 թվի համեմատությամբ: 1931 թ. նոյեմբերին գործադրվելով թյամբ համակված էին 40 միլիոն մարդ (բացի մասնակի գործազուրկներից), իսկ 1932 թ. հունվարին՝ արդեն 43 միլիոն մարդ:

Կապիտալիստական աշխարհը ճգնաժամից յեղք և վորոնում իր ամբողջ ծանրությունը աշխատավորության ուսերի վրա դնելու մեջ: Կապիտալիստական աշխարհը դնում է նոր իմպերիալիստական պատերազմների պատրաստման ճանապարհով: Համաշխարհային բուրժուազիան նոր ինտերվենցիա յե պատրաստում է ՍՄՀՄ-ի դեմ:

Պարզ է, վոր չի կարելի վերացականորեն վերաբերվել իրադարձություններին և կարծել, թե կապիտալիզմի կործանումը կգա «ինքնահոսով»: Խնդիրն այն է, վոր կազմակերպենք բանվոր դասակարգի ուժը: Այս պայքարում բացառիկ նշանակություն է ստանում հստակ լենինյան տեսությունն արհմիությունների մասին, վորը յուսավորում է պրոլետարիատի պայքարի ուղին ընդդեմ կապիտալիզմի, կոմկուսակցության ղեկավարությամբ կազմակերպում է պրոլետարական մասսաներին:

Պրոլետարիատի դասակարգային պայքարն արտասահմանում ավելի ու ավելի յարված է դառնում: Սոցիալիզմի յերկրում վերանում են կապիտալիզմի մնացորդները շարունակվող դասակարգային սուր պայքարին զուգընթաց: «Բուրժուական ազդեցությունների վործեր կան

վոր միայն բանվոր դասակարգի մեջ՝ նրա շարքերը խցկված կուլակների և յենթակուլակների միջոցով, այլ նրանք կան նաև մեր կուսակցության մեջ» (Կազանովիչ. Ճառ Կարմիր պրոֆեսուրայի Ինստիտուտի տասնամյակին նվիրված նիստում):

Ահա թե լինել պրոլետարիատի և նրա կուսակցության դասակարգային պայքարում ստանձնապես մեծ դեր է ուժ են ստանում հեղափոխական տեսությունն ու դասակարգային անդուլ աչալը թյունը սոցիալիստական շինարարության բոլոր բնագավառներում, իդեոլոգիական Ֆրոնտի բոլոր բնագավառներում, այդ թվում նաև պրոֆչարթման պատմության մեջ:

Լուսաբանելով լենինյան ուսմունքը արհմիությունների մասին, մենք պետք է նրա հիման վրա անխնա արմատախիլ անենք պրոֆմիությունների վերաբերյալ աջ ոպորտունիստական և մենչևիկյան «տեսություն» բոլոր մնացորդները, մի տեսություն, վորը հոգածություն թյամբ արմատացնում էր ՀՍՄԿԽ-ի հին, աջ ոպորտունիստական ղեկավարությունը:

Շատերը յենթադրում են, թե ՀՍՄԿԽ-ի հին, ոպորտունիստական ղեկավարությունը պրոֆչարթման իր տեսությունը չուներ, թե նա անփույթ վերաբերմունք ուներ տեսության հանդեպ: Հին ղեկավարությունը անփույթ էր լենինյան տեսության նկատմամբ, նա անտեսում էր լենինյան ուսմունքը արհմիությունների մասին: Իսկ մենչևիկյան, տրեղ-յունիոնիստական տեսությունն նկատմամբ հին ղեկավարությունը անփույթ չէր: Դրան ապացույց են այն տասնյակ հատորները, վոր գրել են մենչևիկները՝ Բալաբանովը, Դրինովիչը, Կոյոկովիկովը, Այնգաֆոր և վորը հրատարակել է ՀՍՄԿԽ-ի արհչարթման պատմության բաժինը, բազմաթիվ մենչևիկյան ծանոթություններով, դրան ապացույց են մենչևիկների և մենչևիկյան տեսության կրքողներին յեյուլթների մի շարք հրատարակված սղագրությունները: Ընկ. Շվենիկը Համ Կ(Բ)Կ XVI համադումարում շատ տեղին ասաց, վոր աջերը Ֆարոցիկների և մյուսների ոպորտունիստական տեսությունը հան-

գուրծում եյին նրա համար, վոր նրանք պատմականորեն արդարացնում եյին նրանց ուղորտունիստական, տրեղ-յունիոնիստական պրակտիկան: «Աչերը վոչ միայն չեյին պայքարում ՀԱՄԿԽ-ի աչքի առաջ զարգացող տրեղ-յունիոնիստական տեսութիւնները դեմ, այլև տպագրական մեքենան դնում եյին նրանց տրամադրութեան տակ»:

Պրոֆչարթման հին ղեկավարութեան ուղորտունիստական պրակտիկան ամբողջապէս արտահայտվել է ՀԱՄԿԽ-ի պրոֆպատի աշխատանքում, պրոֆպատի, վորի խնդիրները վերածվել եյին «պատմական նյութերը համալրելուն ու պահելուն»՝ ապագա պատմաբանի համար: Պրոֆպատի գրականութիւնը վողողված եր մենչեիկյան աշխատութիւններով (Գրինեվիչ, Կոլոկոլնիկով, Այնզաֆա և այլն) տողորված եր պրոֆմիութիւնները կուսակցութեանը հակադրելու վողող, տրեղ-յունիոնիզմի վողող (Յարոցկի և մյուսները): Բայցևիզմի պատմութեան ֆալսիֆիկացիա, պրոֆմիութիւնների լենինյան ուսմունքի ֆալսիֆիկացիա, մարքս-լենինյան դիալեկտիկայի լիակատար անտեսումն ու չհատկանալը, սոցիալիստական շինարարութիւնից կտրված լինելը, ահա թե ի՞նչն եր բնորոշում պրոֆչարթման պատմութեան և տեսութեան ուսումնասիրութեան վիճակը ՀԱՄԿԽ-ի աջ ուղորտունիստական ղեկավարութեան որոք:

«ՀԱՄԿԽ-ի հին ղեկավարութեան աջ պրոֆպաշխատողներն իրենցից ներկայացնում եյին բյուրոկրատացած, մասսաներից կտրված պրոֆեսիոնալիստների մէկ խումբ, վոր արտացոլում եր մենչեիկյան-կուլակային իդեոլոգիայի ազդեցութիւնը: Նրանք միշտ բարիների ընթացքում զարգացնում եյին տրեղ-յունիոնիստական գիծը պրոֆչարթման մեջ, գիծ, վորը մասնավորապէս իր գործնական արտահայտութիւնն ունեցավ այն բանում, վոր չեյին ուզում զարգացնել և ամրացնել արտագրական միութիւնները դերը, վորովհետև միութիւնների արտագրական աշխատանքը և յերկրի սոցիալիստական ինդուստրաց-

ման գործում նրանց մասնակցութեան ուժեղացումը առհասարակ չեյին մտնում նրանց շահերի շրջանակում» (Կազանովիչ. Պրոֆմիութիւնների IX համագումարում արտասանած ճառից):

Կուսակցութիւնը ԿԿ-ի և նրա առաջնորդ ընկ. Ստալինի ղեկավարութեամբ ամբողջ վճռականութեամբ ջանջախեց աջ ուղորտունիստներին պրոֆմիութիւններում, «պրոֆմիութիւններում աշխատող կոմունիստների ճնշող մասսայի աջակցութեամբ» (Շվերնիկ): Ուղորտունիստներին ջանջախելուց հետո ՀԱՄԿԽ-ի նոր կազմը, կուսակցութեան ԿԿ-ի ղեկավարութեամբ անդամակցական մասսաներին վճռականորեն մոբիլիզացիայի յենթարկեց սոցիալիզմի շինարարութեան համար և ապահովեց պրոֆմիութիւնների վողջ աշխատանքի վերակառուցումը «յերեսով դեպի արտագրութիւն»: Մեր ներկայի պրոֆմիութիւնները ՀԱՄԿԽ-ի նոր ղեկավարութեան գլխավորութեամբ իրենց վիթխարի մեծամասնութեամբ վոչնչացրին աջ ուղորտունիստական, ինդիւլիստական և տրոցկիստական իդեոլոգիայի արմատները: Հենվելով հարվածայնութեան վրա, պրոֆմիութիւններն իրենց ցուցաբերեցին վորպէս մարտական ուժ հնդամյակը չորս տարում կատարելու համար մղվող պայքարում: Մեր ներկայի պրոֆմիութիւնները կուսակցութեան ղեկավարութեամբ միլիոնավոր մասսաներին ուղղում են դեպի ճիշտ ճանապարհը» (Կազանովիչ. Պրոֆմիութիւնների IX համագումարում արտասանած ճառից): Սոցիալիստական շինարարութեան կողմից պրոֆմիութիւնների առաջ դրված խնդիրների հաջող կատարումը պահանջում է անդուլ պայքարել յերկու ֆրոնտի վրա—«ընդդէմ աջ թեքման ու «ձախ» խոտորումների, ընդդէմ նրանց նկատմամբ հաշտվողականութեան: Աջ վտանգը և նրա նկատմամբ հաշտվողականութիւնը մնում են իբրև գլխավոր վտանգ և պահանջում են վճռաբար պայքարել պրոֆպաշխատանքի թեորիայից և պրակտիկայից աջ ուղորտունիզմն արմատախիլ անելու համար: Սրան գու-

զընթաց հարկավոր ե հետևողականորեն պայքարել պրոֆչարթման մեջ յեղած «ձախ», անարխո-սինդիկալիստական կիսաարոցիկստական թերութեան դեմ» (Շվեդ-նիկ) :

«Իսկական պրոֆմիությունները մեզ մոտ յերևան յեկան միայն 1917թ. փետրվարից հետո: Արդեն իսկ Հոկտեմբերից առաջ մենք ունեյինք ձևակերպված արհեստակցական կազմակերպություններ, վորոնք բանվորության մեջ ահագին հեղինակություն եյին վայելում»: «Պրոֆմիությունները մեզ մոտ ամենից ավելի զարգացան իշխանությունը վերցնելուց հետո, հատկապես նեպ-ի պայմաններում» (Ստալին. «Լենինիզմի հարցերը») :

Սրան համապատասխան մենք պրոֆչարթման պատմության մեր կուրսում կենտրոնական տեղը հատկացնում ենք հետհոկտեմբերյան շրջանի արհեստակցական շարժման պատմության ուսումնասիրությունը: Գլխավոր ուղադրությունը մենք կենտրոնացնում ենք ուսումնասիրելու բայլշևիկյան կուսակցության դերը հեղափոխական արհեստակցական շարժում ստեղծելու գործում, ուսումնասիրելու կուսակցության յերկու Փրոնտով մղած մշտական ու անհաշտ պայքարի նշանակությունը:

Մեր կուրսի հիմնական խնդիրն է՝ լուսարանել այն նորը, վորը մտցրել է Լենինը պրոֆչարթման մեջ Մարքսից և Ենգելսից հետո:

«Իմպերիալիզմի և պրոլետարական հեղափոխությունների դարաշրջանի» արհեստակցական շարժումը Լենինի ուսմունքի մեջ ստացավ ամուր քեորիա, վորի հիման վրա միայն կարող ե կառուցվել արիշարժման պատմական զարգացման նիշտ սխեման:

Պրոֆմիությունները հանդիսանում են պրոլետարիատի դասակարգային պայքարի ձևերից միայն մեկը, ամենից ավելի կարևոր մասսայական պրոլետարական կազմակերպությունը, վորի միջոցով կուսակցությունը վորպես բանվոր դասակարգի առաջավոր ավան-

գարդ, կատարում է բանվորական մասսաների դասակարգային դաստիարակությունը պրոլետարիատի դիկտատուրայի համար կամ այն ձեռք բերելուց հետո մղվող ինտերնացիոնալ դասակարգային պայքարի վորդով—հանուն պրոլետարական դիկտատուրայի ամրացման և սոցիալիզմի հաջող կառուցման: Դրա համար ել մենք մեզ խնդիր ենք առաջադրում՝ ուսումնասիրել ԽՍՀՄ արհարժման պատմական ուղին, պրոլետարիատի պատմության և Համ Կ(բ)Կ պատմության ուսումնասիրության կազակցությամբ և այլ հիման վրա:

Կուսակցությունը հաստատապես և անշեղ տանում է մարքս-լենինյան տեսության գրոյր, կուսակցությունը վոչ միայն պահպանում, այլև դասակարգային մարտերում շարունակում է մշակել Լենինյան ուսմունքը: Կուսակցությունը անխնա մերկացնում է տրոցկիզմի մարքսենդներին, կուլակի գործակալ աջ թերութի գլխավոր փտանդ տվյալ ետապում, վոր վորձում է խեղաթյուրել մարքս-լենինյան տեսության հիմունքները:

Առաջնագույն պատմականորեն համաշխարհային ծառայությունը լենինյան ուսմունքի մշակումը շարունակելու, սոցիալիզմի համար մղվող պայքարի նոր պայմաններին համապատասխան այն կոնկրետացնելու, բայլշևիզմի մարքս-լենինյան քեորիայի ամենափոքր խեղաքյուրումների նկատմամբ վնասակար ու անխնա հաշտվողականության վոգով կուսակցությունը դաստիարակելու գործում պատկանում է Համ Կ(բ)Կ-ի և վողջ համաշխարհային պրոլետարիատի առաջնորդ բնկ. Ստալինին:

«Պրոլետարակայա ռեվոլյուցիա» ժուրնալի խմբագրությանը ընկ. Ստալինի ուղղած նամակի պատմական դերը նրանումն է, վոր նա կուսակցության և ամբողջ պրոլետարիատին մոբիլիզացիայի յենթարկեց պայքարելու կուսակցական տեսության անաղարտության պահպանման համար, ամենախիստ դասակարգային աջալրջության համար բովանդակ իդեոլոգիական Փրոնտում:

Ընկ. Ստալինի նամակը մարքս-լենինյան տեսության և բայլչեիզմի պատմության համար անհաշտ պայքար մղելու որինակ տվեց: Նամակը բանվոր դասակարգի և սոցիալիստական շինարարության թշնամիներին, հակահեղափոխական տրոցկիզմի դեմ պայքարելու որինակ տվեց, թշնամիներ, վորոնք փորձում էին հրապարակ քաշել իրենց հակահեղափոխական «տեսությունը», որտապործելով իդեոլոգիական Փրոնտի առանձին աշխատողների փտած լիբերալիզմը և աչալըջության բացակայությունը:

Ընկ. Ստալինի նամակում առաջադրված խնդիրներին լույսի տակ, վորոնք պահանջում են «բայլչեիզմը», լենինիստորեն մոտենալ անցյալի պատմությանը, յերեկվա որվա պատմությանը և մոտենալ այնպես, վոր այդ յերեկվա որվա պատմությունը կարելի լինի շագկապել կուսակցության գլխավոր գծի հետ, այն վիթխարի նոր խնդիրների հետ, վորոնք ծառացած են մեր առաջ ախոր և կծառանան վաղը» (Կազանովիչ), ահա այդ խնդիրների լույսի տակ մենք պետք է մոտենանք ԽՍՀՄ արհչարժման պատմության ուսումնասիրությանը: Այդ խնդիրների լույսի տակ մենք կաշխատենք կազմել նաև մեր կուրսը:

Դասերի ծրագրի կառուցման հիմքում դրվելու յե ԶԱՄԿԽ-ի Արհչարժման Բարձրագույն Դպրոցի ծրագիրը, վորը մշակել է Ռուսաստանի և ԽՍՀՄ-ի արհչարժման պատմության տմրիոնը:

Կուրսը նախատեսված է 11 առաջադրության համար, վորոնք նվիրված են հետևյալ թեմաներին.

I. Արհմիությունների մարքս-լենինյան ուսմունքի հիմունքները:

II. Կապիտալիզմի զարգացումը Ռուսաստանում և բանվորական շարժումը մինչև XIX դարի 90-ական թվականները:

III. Բանվորական շարժումը 90-ական թվականներից մինչև 1905 թվականը:

IV. Արհմիությունները 1905-1907 թ.թ.:

V. Արհմիությունները յերկու հեղափոխությունների միջև ընկած շրջանում:

VI. Արհմիությունները վետրվարյան հեղափոխության մեջ և դեպի Հոկտեմբերը տանող ուղիներում:

VII. Արհչարժումը քաղաքացիական պատերազմի շրջանում:

VIII. Արհմիությունները նեպ-ի անցման շրջանում և վերականգնման շրջանում:

IX. Արհմիությունները վերակառուցման շրջանում:

X. Արհմիությունները սոցիալիզմի շրջանն անցնելու ժամանակ:

XI. Խորհրդային արհմիությունները բանվորական և արհեստակցական շարժման միջազգային արեհայում:

I. ԱՐԿՄԻՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՐԿՍ-ԼԵՆԻՆՅԱՆ ՈՒՍՄՈՒՆԳԻ ԿԻՄՈՒԳՆԵՐԸ

ԴԱՍԻ ՆՊԱՏԱԿԸ

Այս թեման մշակելով, ունենդիրները պետք է յուրացնեն Մարքսի, Ենգելսի, Լենինի հիմնական դիրքավորումները արհմիությունների մասին, պետք է յուրացնեն, վոր կուսակցությունը պրոլետարիատի դասակարգային միավորման բարձրագույն ձևն է: Միմիայն կոմունիստական կուսակցության դեկավարությամբ արհմիությունները պրոլետարիատի դիկտատուրայի համար պայքարող դպրոց, կոմունիզմի դպրոց են հանդիսանում:

Ունենդիրները պետք է պարզաբանեն իրենց համար մարքս-լենինյան ուսմունքը պրոլետարիատի քաղաքական ու տնտեսական պայքարի և քաղաքական պայքարի առաջնության մասին:

Ունենդիրները պետք է հասկանան, վոր «իմպերիալիզմի և պրոլետարական հեղափոխությունների դարաշրջանի» արհեստակցական շարժումը Լենինի ուսմունքի մեջ ստացել է ամրակուռ տեսություն, և ծանոթանան այն նոր ու առանձնահատուկ մասերի հետ, վոր մտցրել

և Լենինը արհարժման տեսութեան մեջ: Ամենադիտա-
վոր ուշադրութեամբ պետք է դարձնել հստակորեն յու-
րացնելու արհմիությունների՝ վորպես կոմունիզմի
դպրոցի՝ դերի ու խնդիրների լենինյան բնորոշումը
պրոլետարիատի զիկտատուրայի պայմաններում,
պարզելու այդ լենինյան բնորոշման խեղաթյուրում-
ները մենչևիկների և ամեն գույնի ոպորտունիստների
կողմից: Վորովհետև «արհմիությունների» վորպես
կոմունիզմի դպրոցի՝ լենինյան բնորոշումը՝ այդ կենսո-
րոնական արհմիությունների լենինյան ուսմունքում՝ ա-
մենից ամենի յե խեղաթյուրվել ոպորտունիստների կող-
մից, ամենից ամենի յե նրանց հակազդեցութեանը հան-
դիպել» (Կադանովիչ):

Ուկրաինները պետք է յուրացնեն, վոր արհմիու-
թյունների մարքս-լենինյան ուսմունքը կոմիւնէլ և ամ-
բացել է յերկու Փրոնտով մղած՝ պայքարում—ընդդեմ
աջ ոպորտունիզմի և մանր-բուրժուական ազանդալո-
րական հեղափոխականութեան, վորպես պրոլետարիա-
տի վրա բուրժուական ազդեցութեան յերկու ձևերի:

ԴԱՍԻ ՊԼԱՆԸ

Մարքսը և Ենգելսը արհմիությունների մասին:
Լենինը տարերայնութեան և զիտակցականութեան մասին
բանվորական շարժման մեջ: Կուսակցութեան դերը
պրոլետարիատի հեղափոխական իդեոլոգիայի ստեղծ-
ման և ձևակերպման գործում:

Կուսակցութեանը վորպես պրոլետարիատի դասա-
կարգային միավորման բարձրագույն ձև: Բանվոր դա-
սակարգի կազմակերպման և պայքարի ձևերի ղեկավա-
րութեանը նրա կողմից:

Հեղափոխական արհմիությունները կոմունիստա-
կան կուսակցութեան ղեկավարութեամբ—պրոլետարիա-
տի զիկտատուրայի համար պայքարելու, կոմունիզմի
դպրոց է:

Կուսակցութեանը և արհմիությունները կապիտա-
լիզմից սոցիալիզմի անցման շրջանում: Արհմիու-
թյունները պրոլետարիատի զիկտատուրայի սխտե-
մում:

Լենինը աջ ոպորտունիզմի և մանր-բուրժուական
սեկտանտական հեղափոխականութեան՝ իրրե պրոլե-
տարիատի վրա բուրժուական ազդեցութեան յերկու
ձևերի՝ դեմ մղած պայքարում:

Կուսակցութեան պայքարը անարխո-սինդիկալիս-
տական, տրոցկիստական—մենչևիկյան և աջ ոպորտու-
նիստական տեսութեանների դեմ:

Սկզբի և «ձախերի» միացումը լիբերալ—մենչևի-
կյան կոնցիպիաների հետ արհարժման թեորիայում
և պրակտիկայում, արհմիությունների իրավահավա-
սարութեան և անկախութեան տեսութեանը, արհմիու-
թյունների ոպորտունիստական հակադրումը կուսակ-
ցութեանը և այլն:

«Պրոլետարիայի ուկոլյուցիա»-յի խմբագրու-
թեանն ընկ. Ստալինի ուղղած նամակի քաղաքական
նշանակութեանը: Պայքար արհմիությունների թեո-
րիայից ու պրակտիկայից աջ ոպորտունիստական և
«ձախ» դիրքավորումներն արմատախիլ անելու համար:
Պայքար տրոցկիզմի դեմ՝ իրրե հակահեղափոխական
բուրժուազիայի առաջավոր ջոկատի:

Կուսակցութեան XVI համագումարը արհմիություն-
ների մասին պրոլետարիատի ամբողջ Փրոնտով ծավալ-
ված սոցիալիստական հարձակման շրջանում: Արհմիու-
թյունների դերն ու խնդիրները՝ սոցիալիզմի կառուց-
ման համար բանվորական լայն մասսաների նախաձեռ-
նութեանը մոբիլիզացիայի յենթարկելու, կազմակեր-
պելու և զլխավորելու գործում: Արհմիությունների
IX համագումարը:

Արհմիությունների պայքարը ընկ. Ստալինի վեց
պայմանների իրացման համար: Ընկ. Ստալինի վեց
պայմանները վորպես արհմիությունների յերեսով դե-
պի արտադրութեան չրջադարձի ավարտման լծակ:
Սոցիալիզմի կառուցման ծրագիրը XVII կուսկոնֆե-
րենցիայի վորոշումներում և արհմիությունների խնդի-
րները:

ՄԱՐԲՍԸ ՅԵՎ ԵՆԳԵԼՍԸ ԱՐԶՄԻՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Հենինի ուսմունքն արհաւիրած մասին հիմնոված և մարքսիզմի սկզբունքների վրա: Գիտական սոցիալիզմի հիմնադիր Մարքսն ու Ենգելսը առաջինը հիմնավորեցին բանվոր դասակարգի տեսական պայքարը կապիտալիստների դասակարգի դեմ արդյունաբերական կապիտալիզմի պայմաններում: «Արդեւտարիատը և հարստութունը հակադրութիւններ են», —ասել են նրանք դեռեւս 1845 թվին «Մրբադան ընտանիք» աշխատութիւնում: «Աշխատավարձը և շահույթը գտնվում են հակադարձ-հարաբերական կախման մէջ: Կապիտալի բաժինը — շահույթը — ավելանում է նույն չափով, ինչ չափով նվազում է աշխատանքի բաժինը — աշխատավարձը, — և ընդհակառակը: Այսպիսով, անգամ կապիտալի և վարձու աշխատանքի հարաբերութիւնների սահմաններում մեկի և մյուսի շահերն ուղիղ հակադիր են» (Կ. Մարքս. «Վարձու աշխատանք և կապիտալ»):

Այս դրույթից գիտական սոցիալիզմի հիմնադիրներն արին այն յեղրակացութիւնը, վոր պրոլետարիատի պատմական դերն է՝ վոչնչացնել կապիտալիստական կարգերը նրանց անյուծելի հակասութիւնների հետ միասին, վոր կապիտալիստական կարգերը վոչնչացնել կարելի չէ միայն բռնի հեղափոխութեամբ, «վոր այդ նպատակների (կապիտալիստական կարգերի վոչնչացման նպատակների. — Ա. 2.) իրագործման համար բռնի հեղափոխութեան ընթացքից բացի այլ միջոց չկա» (Ֆ. Ենգելս). (Ընդգծումը իմն է. — Ա. 2.):

Այս միտքն պրոլետարիատը կարող է իրագործել միայն մասսաների պայքարում, ամբողջ դասակարգի պայքարում կոմունիստական կուսակցութեան ղեկավարութեամբ: Ահա թե ինչո՞ւ Մարքսի և Ենգելսի աշխատութիւններում մենք գտնում ենք բաղժից առած ցուցումներ պրոլետարների մասսաների համար պայքարելու առաջնակարգութեան և կարեւորութեան մասին: Ընդ վորում կոմունիստների խնդիրն էր դառնում անցնել իրական բանվորական շարժման կողմը և, այն ընդունելով վորպէս փաստական յեւակեա, աստիճանա-

բար հանել պատշաճ տեսական բարձրութեան վրա» (Ենգելս. Նամակ Վիլհելմսկայային 1886 թ.):

Այստեղ Ենգելսն ընդգծում է, վոր կուսակցութեան համար անհրաժեշտ է ղեկավարել բանվորական շարժումը, չգնալ պրոլետարիատի սոցիալիզմ, այլ, ղեկավարելով նրա պայքարը, այն «հանել պատշաճ տեսական բարձրութեան վրա»: Պայքարում հարկավոր է պրոլետարիատին բարձրացնել ինչէ. պրոլետարական տեսութիւնը՝ գիտական սոցիալիզմը գիտակցելու աստիճանը, իր վերջնական պատմական դերը գիտակցելու աստիճանը, ամենեւին չանտեսելով պայքարը բանվոր դասակարգի ամենորոյա կարիքների համար, այլ, ընդհակառակը, աջակցելով նրան բանվորների առաջ ապացուցել և համոզել նրանց, վոր հակասութիւններն անյուծելի չեն միմեկի այն ժամանակ, քանի դեռ բռնի ճանապարհով չի տապալված կապիտալիստական հասարակարգը, — ահա այն խնդիրները, վորը կուսակցութեան առաջ դրին մարքսիզմի հիմնադիրները:

Պայքարը կապիտալիզմի դեմ տեղի չէ ունենում առաջին հերթին պրոլետարիատի ամենորոյա կարիքների համար անմիջաբար պայքարելու հիման վրա: «Յեթե բանվորները հրաժարվեն այդ պայքարելու կապիտալիստների մշտական վտանգութիւնների դեմ իրենց աշխատավարձի և բանվորական որմա հանդեպ, — գրում է Մարքսը, — ապա նրանք կվերածվեն այն անհուսալիորեն քաղցի դատապարտված մարդկանց անտարբեր մասայի» (Մարքս. «Աշխատավարձ, գին և շահույթ», գլ. XIX):

Կապիտալի դեմ պայքարելով է միայն, վոր պրոլետարիատը կուսակցութեան ղեկավարութեամբ դառնում է «դասակարգ իր համար»: «Տնտեսական հարաբերութիւնները ազգաբնակչութեան մասսային նախ դարձրին բանվորներ: Կապիտալի տիրապետութիւնը այդ մասսայի համար ստեղծեց ընդհանուր դրութիւն և ընդհանուր շահեր: Այսպիսով, մարդկանց այդ մասսան արդեն կազմում է կապիտալիստական դասակարգին հակադիր դասակարգ, բայց ինքն իրեն դեռ այդպիսին չի պատկերանում: Սակայն պայքարում այդ մասսան

միաձուլվում է և կազմակերպվելով դառնում դասակարգ իր համար: Նրա պաշտպանած շահերը դառնում են դասակարգի շահեր. իսկ դասակարգի պայքարը դասակարգի դեմ քաղաքական պայքար է» (Կ. Մարքս-«Փիլիսոփայության ազգատուրթյուն»):

Աշխատանքի և կապիտալի պայքարում ամենավիթխարի դեր են խաղում արհեստակցական միությունները վորպես ամենից ավելի մասսայական կազմակերպություններ, վորպես այնպիսի կազմակերպություններ, վոր բանվորներին համախմբում են նրանց շահերի համար մղվող պայքարում: Այդ փայլուն կերպով ցույց է տվել Մարքսը «Փիլիսոփայության ազգատուրթյուն» աշխատության մեջ, վորտեղ նա ասում է. «Ուշոր արդյունաբերությունը մեկ տեղում է, կուտակում միմյանց անձանով մարդկանց մասսային: Մրցումը անջատում է նրանց շահերը: Բայց աշխատավարձի պաշտպանությունն անկումից-այդ նրանց բոլորի համար ընդհանուր և տերերի շահերին հակադիր շահեր բանվորներին միացնում է մեկ ընդհանուր մտքով կուտիցիային հակադրելու վերաբերյալ:

Այսպիսով կուտիցիան շարունակ յերկյակ նպատակ ունի-դադարեցնել մրցումը բանվորների միջև, վորպեսզի նրանք կարողանան միահամուռ կերպով մրցել կապիտալիստների հետ: Յեթե սկզբնական նպատակն է աշխատավարձի մակարդակի պահպանումը, ապա հետո, ինչ չափով վոր իրենք կապիտալիստները միանում են բանվորներին սանձահարելու մտքով, վերջիններիս առանձին կուտիցիաները ձևակերպվում են խմբերի, և շարունակ միացյալ կապիտալի դեմ հանդիման՝ միության պահպանումը նրանց համար ավելի անհրաժեշտ է դառնում, քան աշխատավարձն անկումից պահպանելը»:

Բացասելի հետաքրքրություն է ներկայացնում Մարքսի և Ենգելսի 1850 թ. դիմումը գերմանական «Կոմունիստների միությանը»: Այս դիմումում առանձնապես կարևոր նշանակություն է տրվում «Կոմունիստների միության» ազդեցությանը Գերմանիայի մասսայական բանվորական կազմակերպությունների վրա-«ԿԿ-ը «Կոմունիստների միության» բոլոր անդամների

ուշագրությունն է հրավիրում այն բանի վրա, վոր ազդեցությունը բանվորական ֆերեյնների վրա և այլն մեծապես կարևորություն է ներկայացնում և ամենուրեք պետք է ձևաք բերվի»:

Մարքսը և Ենգելսը համառորեն պահանջում էյին գերմանական ընկերներից նրանց տեղեկություն տալու, թե ինչպիսի հաջողությամբ են նրանք ազդեցություն չահում մասսայական բանվորական կազմակերպությունների վրա: Մարքսը և Ենգելսը շարունակ մատնանում էյին արհմիության նշանակությունը՝ վորպես ամենից ավելի ելեմենտար, պրոլետարիատի համար ամենից ավելի հասկանալի միավորման, աշխատավարձի բարձրացման համար պայքարելու հողի վրա: Բայց դրա հետ յեկտեղ Մարքսը և Ենգելսը շարունակ ընդգծում էյին քաղաքական պայքարի դերն արհմիություններում և կուտակցության կողմից այդ պայքարի ղեկավարելու անհրաժեշտությունը: Հետաքրքիր նաև, վոր Մարքսը արհմիությունների դերը բնորոշելիք ձևակերպումների մեջ բաղմիցս գործ է ածում մեյալ ծանոթ «լծակներ» տերմինը: Ահա, որինակ, արհմիությունների դերի վերաբերյալ ձևակերպումների մեկը, վոր տվել է Մարքսը 1866 թվին I Ինտերնացիոնալի Ժրնեվյան կոնգրեսում.

«Յեթե արհմիություններն անպայման անհրաժեշտ են աշխատանքի և կապիտալի ամենորյա պարտիզանական պատերազմում, ապա նրանք շատ ավելի մեծ նշանակություն ունեն վորպես լծակներ, վոր կազմակերպչորեն նպաստում են վարձու աշխատանքի սխտեմ վոչնչացմանը» (ընդգծումն իմն է.—Ա. Զ.):

Մոտելով մոլեզնած բուրժուազիայի հարձակման մասին Փարիզյան կոմունայի պարտությունից հետո Մարքսը մատնանում էր նաև, վոր յեթե կա մեկը, վոր կարող է հետ մղել բուրժուազիայի հարձակումը, դա քաղաքական կուտակցությունն է, իսկ այն կազմակերպությունները, վոր պետք է մոբիլիզացիայի յենթարկվեն կուտակցության շուրջը, հանդիսանում են արհմիությունները:

Դուք տեսնում եք, վոր կուտակցության իրրև շարունակ մասսաների հեպտոմից ավելի մասսայա-



կան պրոլետարական կազմակերպությունների, այն և արհմիությունների հետ կապված ավանգարդի իդեան պատկանում է դեռևս Մարքսին ու Ենգելսին:

Մարքսը և Ենգելսը արհմիությունները դիտում են վոչ փորպես քարացած մի ձև, այլ նրանց ցույց են տալիս զարդացման մեջ, բնորոշելով արհեստակցական միավորումների անցյալն ու ներկան և վորոշելով ապագան:

Լենինը, խոսելով բանվորական կոալիցիաների վերաբերյալ Մարքսի տված դիրքավորումների մասին (հատկապես «Փիլիսոփայության աղքատության» մեջ), գտնում էր, վոր այդտեղ տրված են «անտեսական պարքարի և արհեստակցական շարժման ծրագրին ու տակտիկան միջանի տասնամյակի համար, գալիք կրոմբին պրոլետարիատի ուժերը պատրաստելու յերկար եպոխտի համար» (Լենին. Յերկերի ժողովածու, 2-րդ հրատ., XVIII հատ., էջ՝ 28-29):

Մարքսը և Ենգելսը պաշտպանում էին արհմիությունների ու կուսակցության ճիշտ փոխհարաբերությունները յերկու Փրոնտով պայքարում:

Նրանք յեռանդով պայքարում էին զուտ եկոնոմիզմի կոյմնակիցների դեմ, նրանց դեմ, վորոնք կոյմնակից էին արհմիություններն ընդունել վորպես բանվոր դասակարգի միավորման միակ բուն ձևը, ինչպես այդ տեղի ուներ անգլիական տրեդ-յունիոններում, վորոնք ըստ էյության հրաժարվում էին վորեն գասակարգային պայքարից և դասակարգային «ներդաշնակություն» էյին հայտարարում:

«Տրեդ-յունիոնները արհամարհելով ամեն մի տեսություն. խուչ են մնում սոցիալիստական և կոմունիստական տեսարանների հանդեպ»,— ալոպես էր գրում տրեդ-յունիոնիզմի պատմաբաններից մեկը 1871 թվին:

Կորականապես ու վճռականորեն էյին Մարքսը և Ենգելսը հարձակվում նրանց վրա, ովքեր հենվում էյին տրեդ-յունիոնների՝ զուտ եկոնոմիզմի և յիրերալ բանվորական կառավարության այդ կոյմնակիցների փորձի վրա, նրանց դեմ, ովքեր չափազանցում էյին տնտեսական պայքարի նշանակությունը և արհմիություն-

ները համարում էյին պրոլետարիատի հիմնական կազմակերպություն: Ահա թե, որինակ, ինչպես էր Ենգելսը յննադատում իր հին բարեկամ, գերմանացի կոմունիստ Բեկկերին. «Տերունի Բեկկերն ըստ յերեվույթին վերջնականապես խելըր թուցրել է: Այդ ինչպես է նա կարող դեկրետավորել, թե արհմիությունները բանվորների միավորման բուն ձևն ու ամեն մի կազմակերպության հիմքն են հանդիսանում» (Ենգելսի Մարքսին գրած նամակից 1869 թ.):

Նույնպիսի ուժգնությամբ և խստությամբ Մարքսն ու Ենգելսը հարձակվում էյին լասալյանների վրա, վորոնք կամենում էյին արհմիությունները մասսայական կազմակերպությունից վերածել սեկտանտական կազմակերպության, վորոնք բացասաբար էյին վերաբերվում բանվոր դասակարգի տնտեսական պայքարի բոլոր ձևերին (ըստ Լասալի տեսության աշխատավարձի «յերկաթյա» որենքի վերաբերյալ, բանվոր դասակարգը բոլոր պայմաններում դատապարտվում էր անպըտուղ տնտեսական պայքարի):

Մարքսը խստիվ դատապարտել է Շվեյցերին (Լասալի հաջորդին) այն բանի համար, վոր նա սեկտանտական վոգի յեր մացնում արհմիությունների մեջ:

Ահա թե Շվեյցերը 1868 թվին ինչ էր գրում գործադուլների առթիվ.

«Չի կարելի գործադուլներ կազմակերպել այնտեղ, ուր նրանք ինքնիրեն չեն յինում: Յերբեք սոցիալիստի մտքովը չի անցկենա գործադուլներ կազմակերպական միջոց, յեթե գործադուլները չեն գալիս ինքնիրեն: Վորովհետև սոցիալիստն այն կարծիքին է, վոր ամելի լավ կլինի ուղղակի դնալ դեպի նպատակը—պետությունը դնել բանվոր դասակարգի տրամադրության տակ»:

(Ավելի հետո մենք կտեսնենք թե ինչքան շատ ընդհանուր բան կա այս դիրքի և «մոյեզնած» մանր-բուրժուաների ալոորվա դիրքի միջև, մանր—բուրժուաներ, վորոնք սեկտանտաբար տնտեսում են բանվոր դասակարգի ամենորյա պայքարը, արհամարհում են աշխատանքը մասսայական կազմակերպությունների

մեջ, «մեծ և փոքր Յերգիրքներին» «տեսությունն» են քարոզում.)

Լասսալյանները վորպես արհմիությունների մեջ մտնելու պայման էյին առաջադրում՝ կուսակցության գրեթե ամբողջ ծրագիրն ընդունելու պահանջը: Մարքսը Լասսալյաններին կշտամբում էր այդ պահանջի համար: Շվեյցերիին ուղղված նամակում, վորը Մարքսը գրել է 1868 թվին, մենք կարդում ենք. «Այդպիսի կազմակերպությունն ավելի շուտ հարմարում է սեկտանտական շարժման դադանի ընկերություններին, քան յնա՝ կոստարիկայես հասկանում է արեղ-յունիսների (արհմիությունների) եյությանը»:

Այսպես, մենք տեսնում ենք, վոր Մարքսի և Ենգելսի պայքարը յերկու Փրոլետի միտ, հանուն կուսակցության և արհմիությունների փոխհարաբերությունների ճիշտ հասկացման, մղվել է ընդդեմ արհմիութենական կրեպիտիզմի («միմիայն նրոնիսիոնայիզմ») և ընդդեմ արհմիությունների սեկտանտական ժխտման, ընդդեմ արհմիությունների դերի ու խնդիրների սեկտանտական ըմբռնման (Լասսալ, Շվեյցեր և այլն), ընդդեմ նրանց կտրվածության՝ բանվորական շարժման ուսույթագայից-մասսաներից:

Այս առնչությամբ մենք Մարքսի և Ենգելսի մոտ գտնում ենք արհմիություններին բնորոշումը վորպես «սոցիալիզմի դպրոցի», կամ, ավելի ճիշտ, վորպես «սոցիալիզմի նախնական դպրոցի»:

Մարքսը 1869 թվին մետաղագործների Ընդհանուր միության գլխավոր գանձադահլին ուղղած նամակում գրում էր.

«Արհմիությունները սոցիալիզմի նախապատրաստական (նախնական) դպրոց են: Միությունների մեջ բանվորներից մշակվում են սոցիալիստներ, վորովհետև միություններում ամեն որ նրանց աչքի առաջ պայքար է մղվում կապիտալիզմի դեմ:

Պայքարը կապիտալիզմի դեմ արհմիությունները դարձնում է սոցիալիզմի նախապատրաստական դպրոց և նրանց դարձնում է «սոցիալիզմի դպրոց» այնքանով,

վորքանով «բանվորներից մշակվում են սոցիալիստներ»:

Հարկավոր է ընդգծել, վոր այս դիրքավորումը վոչ մի ընդհանուր բան չունի նրա հետ, ինչպես Մարքսի դիրքը արհմիությունների հարցում բնորոշում է Նյուերներգը, արհաբժման իմա-տեսաբաններից մեկը, վորը կոմակադեմիայում աված իր գեկուցումը վերջացրեց այն պնդումով, վոր իրրե թե «Մարքսը Ինտեր-նացիոնալի I կոնգրեսի բանաձևում ընդգծել է, վոր բանվորական շարժման զարգացման առաջին ստադիայում արհմիությունները բանվորներին համախմբում են կապիտալի դեմ նրանց մղած պայքարում, տարերային շարժումը վերածելով դասակարգային շարժման»:

Մարքսի այս «ազատ շարադրումը» ըստ Եյության խեղաթյուրում է ամենապիտավորը նրա ուսմունքում, հենց այն, վոր տարերային արհեստակցական պայքարն ինքն իրեն դասակարգային պայքարի մեջ վերածել չի կարող»:

Տարերային պայքարի վերածումը դասակարգային քաղաքական պայքարի մեջ կարող է տեղի ունենալ միմիայն պրոլետարական կուսակցության գեկավարությամբ:

Մենք տեսանք, թե ինչպես է Նյուերներգն «ըստ Մարքսի» բնորոշում արհմիությունների անցյալը բանվորական շարժման առաջին ստադիայում: Արհմիությունների «ներկան» Մարքսը Նյուերներգի «շարադրումով» բնորոշում է հետևյալ կերպ. «Արհմիությունները գառնում են ամուր կազմակերպություն, և նրանց մեջ սկսում է արտահայտվել հասարակական-քաղաքական խնդիրների վորոշ թերագնահատում»:

Նման պնդումը բացահայտ անհեթեթություն է: Ինքներդ գատեցեք, ի՞նչպես կարելի չե ծայրը ծայրին հասցնել—արհմիությունները գառնում են ամուր կազմակերպություն, և միաժամանակ նրանց մոտ զարգանում է հասարակական-քաղաքական խնդիրների թերագնահատում: Այն ժամանակ ել ինչո՞ւմն է Մարքսը տեսնում, ընդ. Նյուերներգի կարծիքով, արհմիությունների ամրացումը: Անհասկանալի չե: Վոչ արդյոք նրանում, վոր նրանց մոտ սկսել է արտահայտ-

վել հասարակական-քաղաքական խնդիրների թերադնա-
հատում:

Նյուրնբերգը բացահայտորեն աղավաղում է Մարք-
սին:

Տեսնենք, թե իրականության մեջ ի՞նչ է ասում
Մարքսը:

«Արհեստակցական միությունները շատ են բացա-
ռապես կենտրոնացել կապիտալի դեմ ուղղված անմի-
ջական պայքարում: Նրանք դեռ վուժ լիովին հասկացել
են վարձու ստրկության դեմ ուղղված իրենց գործու-
նեցության ամբողջ ուժը: Ահա թե ինչո՞ւ յեն նրանք
մեկ կողմը մնացել ընդհանուր քաղաքական շարժում-
ներից: Սակայն վերջին ժամանակներս նրանք ակըն-
հայտորեն մոտենում են վորոշ չափով հասկանալու
իրենց մեծ պատմական միսիան, ինչպես այդ, որինակի
համար, յերևում է նրանց մասնակցությունից Անգ-
լիայի վերջին ժամանակների քաղաքական շարժմանը,
նրանց ամենից ավելի լայն տեսություններից իրենց
ֆունկցիաների վերաբերմամբ Միացյալ Նահանգներում
և հետևյալ բանաձևից, վոր ընդունեց արհմիութ-
յունների վերջերս կայացած կոնֆերենցիայի կողմից.
«Կոնֆերենցիան, լիովին հավանություն տալով բոլոր
այն ջանքերին, վորը գործ է դրել բանվորների միջադ-
գային ընկերությունը բոլոր յերկրների բանվորներին
մեկ ընդհանուր յեղբայրական միության մեջ հա-
մախմբելու նպատակով, համառորեն հանձնարարում
է գանազան միություններին, վորոնց ներկայացուցիչ-
ները ներկա յեն կոնֆերենցիայում, մտնել ինտերնա-
ցիոնալ, վորովհետև այդ անպայմանորեն անհրաժեշտ է
բոլանդակ աշխարհի բանվորների հառաջադիմության
և բարգավաճման համար»:

Մարքսիստական դիալեկտիկայի այս տիպարը
արհմիությունների զարգացումը գնահատելու խնդրում,
նրանց փոխհարաբերությունները կուսակցության հետ՝
իրրև պրոլետարիատի բարձրագույն դասակարգային
կազմակերպության, ամենևին նման չի ընկ. Նյուրն-
բերգի ազատ վերապատմումին:

Վերջապես, յերրորդ ստադիան, այն, վորը Մարք-

սը կոչում է «արհմիությունների ապագա», Նյուրնբեր-
գը բնորոշում է այսպես. «Արհմիությունները դառնում
են բանվոր դասակարգի կազմակերպչական կենտրոն,
նրանք ձգտում են պրոլետարիատի յիսկասար ազա-
տագրմանը» (Նյուրնբերգի հոդվածը «История проле-
тариата» յողովածույի 1931 թ. 5-րդ համարում էջ՝ 152):

Իրականության մեջ Մարքսը արհմիությունների
մասին ասում է հետևյալը.

«Բացի իջեց սկզբնական խնդիրներից, նրանք
պետք է սովորեն գիտակցաբար դործել, վորպես բանվոր
դասակարգի կազմակերպիչ կենտրոններ, դասակարա-
կելով նրանց ազատագրման կամքը, նրանք պետք է
ոգնեն ամեն մի սոցիալ-քաղաքական շարժման, վոր
ձգտում է այդ նպատակին»:

Ինչպես տեսնում եք, Մարքսը դարձյալ ընդգծում
է, վոր, մեկ կողմից, արհմիություններն իրենց զարգաց-
ման ընթացքում պետք է հանգեն, սկզբնական տնտեսա-
կան պայքարից բացի, նաև դասակարգային-քաղաքա-
կան պայքարի, իսկ մյուս կողմից՝ վոր նրանք պետք է
ոգնեն քաղաքական կազմակերպությանը, այսինքն՝
դառնան պրոլետարիատի կուսակցության լծակ:

Այսպիսով, Նյուրնբերգը, շարադրելով Մարքսին,
նրան ըստ եյության խեղաթյուրել է:

Մենք տեսնում ենք, վոր Մարքսը և Ենգելսը տյեկ են
արհմիությունների դերի և խնդիրների իսկական հեղա-
փոխական բնորոշումը, վորը և բազա յե ծառայել լե-
նինյան ուսմունքին արհմիությունների մասին, նրանց
դերի ու խնդիրների մասին կապիտալիստական կա-
դերի տապալման համար մղվող պայքարի, պրոլետա-
րիատի յշխանության ամբացման և սոցիալիզմի կա-
ռուցման շրջանում:

ԼԵՆԻՆԸ ՅԵՎ ԲԱՅԼՇԵՎԻԿՆԵՐԸ ԱՐԶՄԻՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Արհմիությունների դերի և խնդիրների ճիշտ լու-
սաբանում տալ կարելի յե միայն լենինիզմի հիման վրա,
միայն լենինյան ուսմունքի հիման վրա կուսակցության
վորպես բանվոր դասակարգի առաջնորդի մասին: Լե-
նինիզմը ներծծել է բոլոր յերկրների բանվորական

չարժման փորձը, լենինիզմը պրոլետարիատի միակ հեղափոխական տեսությունն է: «Լենինիզմը դա իմպերիալիզմի և պրոլետարական հեղափոխությունների դարաշրջանի մարքսիզմն է ընդհանրապես, պրոլետարիատի դիկտատուրայի թեորիան և պրակտիկան՝ մասնավորապես» (Ստալին):

Ուսմունքը արհմիությունների մասին լենինիզմի բաղկացուցիչ մասն է, նրա այնպիսի մասը, վոր անխղճ լիորեն և օրդանապես չաղկապված է Լենինի ուսմունքի հետ կուսակցության մասին: «Ներկայացնելով ընդհանուր և տեսական շահերն՝ ամբողջապես վերացած կուսակցությունը մարմնավորում է պրոլետարական սկզբունքների, պրոլետարական կամքի, պրոլետարական հեղափոխական զործողության միասնությունը» (Կոմինտերնի ծրագրից, V բաժ.):

Չկա և չի կարող լինել ինքնուրույն, լենինիզմի ընդհանուր տեսությունից կտրված արհչարժման տեսություն:

Արհմիություններն ընդհանուր ողակն են այն պայքարի շղթայում, վոր մղում է պրոլետարիատը կուսակցության ղեկավարությամբ կապիտալիստական հասարակարգը տապալելու համար, իր դիկտատուրայի համար, սոցիալիզմի հաջող շինարարության համար:

Արհմիությունների վորպես կոմունիզմի դպրոցի դերն ու նշանակությունն ուժեղացնել կարելի չէ միայն պրոլետարիատի դասակարգային պայքարի կապակցությամբ, կուսակցության ղեկավար դերի կապակցությամբ, պրոլետարական հեղափոխության և սոցիալիզմի շինարարության կապակցությամբ:

Այս դրույթը հաստատվում է ամբողջ աշխարհի բանվոր դասակարգի պայքարի փորձով, հաստատվում է Մարքս-Ենգելս-Լենին-Ստալինի ուսմունքով, հաստատվում է ուսական բայլչեիզմի փորձի համաշխարհային-պատմական նշանակությամբ:

Արհմիությունների վորպես կոմունիզմի դպրոցի դերն ու նշանակությունը կարելի չէ հասկանալ միմիայն բայլչեիզմի վճռական ու անհաշտ պայքարի կապակցությամբ՝ ընդդեմ մենչևիկների, աջերի և «ձախերի»:

«Բայլչեիկները հանդիսանում են աշխարհիս միակ հեղափոխական կազմակերպությունը, վորը մինչև վերջը ջանջախել է ոպորտունիստներին ու ցենարիստներին և նրանց դուրս վտարել կուսակցությունից» (Ստալին, «Բայլչեիզմի մի քանի հարցերի մասին»):

Մենչևիկների լիակատար մերկացումն ու վտարումը արհչարժման շարքերից, Լենինի, բայլչեիկների յերկու Փրոնտով պայքարը թե Ռուսաստանում և թե՛ միջազգային բանվորական շարժման մեջ, պայմանավորեցին նաև արհմիությունների նշանակությունը վորպես կոմունիզմի դպրոցի, պայմանավորեցին Ռուսաստանի և ԽՍՀՄ-ի արհչարժման մարտական հեղափոխական դերը: Լենինի ղեկավարությունը բայլչեիկներին տվեց այնպիսի կազմակերպչական փորձ, այնպիսի իդեոլոգիական կովււածություն, վորոնցով նրանք յեղան միակ խմբավորումը (II Ինտերնացիոնալի բոլոր խմբավորումներից), վորը վճռականորեն ու անվերադարձ կերպով կապերը խզեց ոպորտունիստներից: Այդ մասին են խոսում «ամեն գույնի ոպորտունիստներից կապերը խզելու ուղղությամբ ուսական բայլչեիկների վարած (1904—1912 թ. թ.) վճռական քաղաքականության հանրածանոթ փաստերը» (Ստալին):

Արհմիությունների վորպես կոմունիզմի դպրոցի համար մղած պայքարում Լենինը, բայլչեիկները հետևողական ու համառ ամենորյա պայքար են մղել մասսաների համար, բոլոր յեղանակներով մերկացնելով մենչևիկների և ոպորտունիստների դավաճանությունը: Ահա թե ինչու «արհմիությունները կոմունիզմի դպրոց են» հասկացողությունը պետք է սերտորեն շաղկապվի կոմունիզմի համար մղվող պայքարին. այդ պայքարի պատմական պարզացման զանազան ետապներում նա պետք է շաղկապվի այն պայքարի փորձի հետ, վորը մղել է բայլչեիզմը պրոլետարիատի մասսաներին դիտավորելու համար:

Լենինիզմը իմպերիալիզմի և պրոլետարական հեղափոխությունների դարաշրջանի մարքսիզմն է: «Լենինիզմը մարքսիզմի հետագա զարգացումն է» (Ստալին): Բայց «լենինիզմը բացատրել, նշանակում

ե բացատրել այն առանձնահատուկը և նորը Լենինի աշխատություններում, վոր մտցրել ե Լենինը մարքսիզմի ընդհանուր գանձարանում և վորը բնականորեն կապված ե նրա անվան հետ» (Ստալին):

Ինչպես վոր լենինիզմն ամբողջապես վերցրած հանդիսանում ե մարքսիզմի հետագա զարգացումը, այնպես ել Լենինի ուսմունքը արհարծման մասին Մարքս-Ենգելսի՝ արհմիությունների վերաբերյալ ուսմունքի հետագա զարգացումն ե: Դրա շնորհիվ հատուկ նշանակութուն ե ստանում կուսակցական և արհեստակցական միությունների խոխարաբերությունները ճիշտ հասկանալու անհրաժեշտությունը, իմպերիալիզմի պայմաններում և պրոլետարիատի դիկտատուրայի պայմաններում, սոցիալիզմի շինարարության պայմաններում:

Այդ խնդիրների ճիշտ բնորոշումը ընդգրկում ե արհարծման մեջ Լենինի, բայլչեիկների վարած տակտիկայի հիմնական հարցերը, և միայն այդպիսի բնորոշումը կարող ե լենինիստորեն բացատրել «արհմիությունները լենինիզմի դպրոցն են» ֆորմուլան: Արհմիությունների ելության այս ամենից ավելի ընդհանուր և միաժամանակ ամենից ավելի կոնկրետ լենինյան բնորոշումը պահանջում ե, վոր մենք այդ բնորոշումը տանք վոչ-վերացականորեն, այլ կոմունիստի համար պայքարելու կոնկրետ խնդիրների կապակցությամբ:

Կապիտալիզմի տասյարման, սոցիալիստական հասարակության կառուցման համար պայքարելու այս կոնկրետ պատմական խնդիրների հիման վրա ել Լենինը տվել ե արհարծման ամրակուռ ու ամբողջական տեսությունը: Լենինյան ուսմունքը արհմիություններին մասին կոմիվել և սրվել ե յերկու ֆրոնտի վրա մղվող անխոնջ պայքարում, ոպորտունիզմի ամեն տեսակ դրսևորման դեմ մղվող պայքարում, տարերայնության իրրե «ամեն տեսակ տրամաբանական հիմունքի» (Ստալին) դեմ մղվող բայլչեիկյան պայքարում: Պատահական չե, վոր մենչեիկներն ու ոպորտունիստները Ռուսաստանի բանվորական և արհեստակցական

չարծման մասին գրած իրենց «աշխատություններում» իրենց կոնցեպցիայում յեշում եյին պրոլետարական մասսաների տարերային շարծումից, ընդվորում անտեսելով կուսակցության գիտակցականությունն ու ղեկավար գերը:

Լենինը և լենինյան խումբը դեռևս 90-ական թվականներին յեռանդուն մասնակցություն եյին բերում բանվոր դասակարգի տնտեսական պայքարին: Բայց այդ պայքարը Լենինը յերբեք չեր դարձնում ինքնանպատակ, յերբեք չեր կտրում սոցիալ-դեմոկրատական լոզունգների համար մղվող, ուսական պրոլետարիատի ամենալայն պատմական խնդիրների համար մղվող ընդհանուր պայքարից: Իսկ ամենալայն պատմական խնդիրների համար մղվող այս պայքարը բանվոր դասակարգը կարող եր վարել միմիայն իր կուսակցության ղեկավարությամբ:

«Կուսակցությունը, վոր հանդիսանում ե բանվոր դասակարգի ավանգարդը, վոր ներծծել ե սոցիալիզմի ուսմունքը, սոցիալ-դեմոկրատիայի ուսմունքը, ծնունդ ե առել միանգամայն անկախ՝ տարերային բանվորական շարծումից, ծնունդ ե առել վորպես արդյունք հեղափոխական-սոցիալիստական ինտելիգենցիայի մարի գարգացման» (Լենին. «Ի՞նչ անել», Յերկերի ժողով, IV հ., 2-րդ հրատ., էջ 385):

Այն վիթխարի տարերային վերելքը, վորը տեղի ունեցավ բանվորական շարծման մեջ 90-ական թվականներին, հեղափոխական սոցիալ-դեմոկրատիայից պահանջում եր մեծագույն գիտակցականություն: Իսկական հեղափոխականները պետք ե շարծումն ուղղելին գիտակցականության հունով, և վոչ թե ծունկ չոքելին տարերային վերելքի առաջ: Լենինը նույն «Ի՞նչ անել» աշխատությունում գրում եր. «Ինչքան մեծանում ե մասսաների տարերային վերելքը, ինչքան լայնանում ե շարծումը, այնքան ավելի անհամեմատ արագորեն և աճում գիտակցականության մասսայի պահանջը՝ սոցիալ-դեմոկրատիայի թե՛ տեսական, թե՛ քաղաքական և թե՛ կազմակերպչական աշխատանքում»:

Պայքարելով բանվոր դասակարգի «բարեկամների»

դեմ, վորոնք իրենց ամբողջ ուշադրութիւնը կենտրոնացնում է յին տնտեսական դատապարտումներ կազմակերպելու, բանուժի՝ բանվորներին շահավետ վաճառքի պայմանների ստեղծման համար պայքարելու, կապիտալիստների այս կամ այն խմբի դեմ պայքարելու վրա, Լենինը գրում էր. «Սոցիալ-դեմոկրատիան ղեկավարում է բանվոր դասակարգի պայքարը վոչ միայն բանուժի վաճառքի շահավետ պայմանների համար, այլև վոչնչացնելու համար այն հասարակարգը, վորը չունենորեն խոչնդում է իրենց վաճառել հարուստներին: Սոցիալ-դեմոկրատիան ներկայացնում է բանվոր դասակարգը վոչ միայն ձեռնարկատերերի տվյալ խմբի հանդեպ նրա ունեցած վերաբերմունքի խնդրում, այլև նրա այն վերաբերմունքների խնդրում, վոր ունի նա ժամանակակից հասարակութան բոլոր դասակարգերի հանդեպ, պետութան հանդեպ՝ վորպես կազմակերպված քաղաքական ուժի: Այստեղից հասկանալի յե, վոր սոցիալ-դեմոկրատները չեն կարող սահմանափակվել տնտեսական պայքարով, չեն կարող թույլ տալ վոր տնտեսական դատապարտումների կազմակերպումը կազմի նրանց գերակշռող գործունեութիւնը: Մենք պետք է ակտիվորեն ձեռնարկենք բանվոր դասակարգի քաղաքական դատարարական գործին, նրա քաղաքական գիտակցութեան զարգացման գործին»:

Այնուհետև Լենինը նույն առթիւ գրում է. «Սոցիալ-դեմոկրատիան բանվորական շարժման միացումն է սոցիալիզմի հետ, նրա խնդիրն է՝ վոչ թե պասիվորեն ծառայի, բանվորական շարժմանը նրա յուրաքանչյուր առանձին ստադիայում, այլ ներկայացնել ամբողջ շարժման շահերը, այդ շարժմանը ցույց տալ նրա վերջնական նպատակը, նրա քաղաքական խնդիրները, պահպանել նրա քաղաքական իդեալական ինքնուրույնութիւնը: Սոցիալ-դեմոկրատիայից կտրված բանվորական շարժումը մանրանում է և անպայման բուրժուականանում. միայն տնտեսական պայքար մղելով, բանվոր դասակարգը կորցնում է իր քաղաքական ինք-

նուրույնութիւնը, դառնում է մյուս կուսակցութիւնների պոչը...» (Լենին):

Լենինի գլխավոր խնդիրներից մեկը, ինչպես 90-ական թվականների շրջանում, այնպես հետագա բոլոր տարիներին, պայքարելն էր բուրժուական իդեոլոգիայի ազդեցութեան դեմ բանվոր դասակարգի վրա, պայքարել զանազան գույնի ուղորտունիստների դեմ, վորոնք այդ իդեոլոգիան քարշ էյին տալիս բանվոր դասակարգի շարքերը և ձգտում էյին պրոլետարիատի շարժումը յենթակա դարձնել բուրժուազիայի շահերին: Բնական է, վոր Լենինի հարվածները պետք է ուղղվէյին նրանց դեմ, ովքեր նսեմացնում էյին կուսակցութեան դերը վորպես ավանդարդի, ովքեր նսեմացնում էյին գիտակից ելեմենտի նշանակութիւնը, ովքեր ծնրադրում էյին տարերայնութեան առաջ, վորովհետև «ամեն մի ծնրադրում բանվորական շարժման տարերայնութեան առաջ, սոցիալ-դեմոկրատիայի դերի ամեն մի նսեմացումը դրանով իսկ նշանակում է՝ միանգամայն անկախ այն բանից՝ նսեմացնողն այդ ցանկանում է թե՛ վոչ—բուրժուական իդեոլոգիայի ազդեցութեան ուժեղացում բանվոր դասակարգի վրա» (Լենին):

Բանվորական շարժման տարերային զարգացումը անխուսափելիորեն տանում է դեպի բանվորական շարժման յենթարկումը բուրժուական իդեոլոգիային՝ այդտեղից բխող բոլոր հետեութիւններով: Բանվորական շարժումը, վոր զարգանում է տարերայնորեն, վորը կուսակցութեան կողմից չի ուղղվում գիտակցականութեան հունով, —տրեղ-յունիոնիզմն է: «Իսկ որեղյունիոնիզմը հենց բանվորների իդեալական ստրկացումն է բուրժուազիայի կողմից» (Լենին):

Ընդ. Ստալինը, ամբողջ ուժով հարձակվելով II Ինտերնացիոնալի՝ մարքսիզմի Փարիսիկատորների վրա, գրում է. «Տարերայնութեան առաջ ծնրադրելու տեսութիւնը վճռականորեն դեմ է այն բանին, վոր տարերային շարժմանը տրվի գիտակցական, պլանաչափ բնույթ, նա դեմ է այն բանին, վոր կուսակցութիւնը դնա բանվոր դասակարգի առջևից, վոր կուսակցութիւնը մասսաներին բարձրացնի մինչև գիտակ-

¹ Լենին. «Ինչ անել». Յերկ. ժող., IV հատ, էջ 404.

ցականության մակարդակը. — նա թեր ե այն բանին, վոր շարժման գիտակից ելեմենտները չխանգարեն շարժմանն ընթանալու իր ճանապարհով, նա թեր ե այն բանին, վոր կուսակցությունը, ունենդերով տարերային շարժմանը, քարշ գա նրա պոչից:

«Տարերայնության տեսությունը՝ շարժման մեջ գիտակից ելեմենտի դերը նսեմացնելու տեսությունն ե, պոչականության իդեոլոգիան, ամեն տեսակ ոպորտունիզմի տրամաբանական հիմքը» (Ստալին. — «Լենինի գմի հարցերը», էջ՝ 22, 1931 թ. ոտւս. հրատ.):

Լենինյան հստակ դիրքերը տարերայնության ե գիտակցականության մասին, կուսակցության ե արհմիությունների փոխհարաբերությունների մասին, վորոնք ձևակերպվել են 1905 թվից դեռ չատ առաջ, վոչ մի առիթ չեն տալիս վոչ մի պահ կասկածելու այն դիրքի մասին, վոր ուներ Լենինը արհմիությունների չեզոքության հարցում: Լենինը յերբեք նեյտրալիստ չի յեղել, Լենինը արհմիությունների չեզոքությունը նշալակել ե վորպես դավաճանություն: Չնայած այս հարցի բացարձակ պարզության, մենք, այնուամենայնիվ, գտնում ենք Լենինի, բայլչեիկների դիրքի անճիշտ յուսարանում վոչ միայն «մենչեիկների ե ոպորտունիստների աշխատություններում, վոչ միայն Տոմսկու, Յարոցկու ե մյուսների մոտ, այլև ընկ. Յարոսլավսկու խմբագրած քառահատոր «Համ Կ(բ)ի պատմության» մեջ: ՌՍԴԲԿ V Լոնդոնյան համագումարին նվիրված բաժնում (II հատ., էջ 715), վորտեղ գնահատվում ե սոցիալ—դեմոկրատիայի տակտիկան արևելասլավոնական միությունների նկատմամբ, մենք կարդում ենք.

«Քանի դեռ արհեստակցական միությունների կազմակերպությունը սաղմնային բնույթ եր կրում, դուրս չգալով փոխոգնության սկզբնական գանձարկների ե րնկերությունների ստադիայից (ընդգծումը մերն ե. — Ա. Զ.), արհմիությունների հարցը ակտուալ չեր, միայնով ավելի չատ տեսական, քան կոնկրետ—քաղաքական պրոբլեմ»:

Ինչպես տեսնում եք, այստեղ արհշարժման պատ-

մությունը հրամցվում ե մենչեիկների ե ոպորտունիստների մեկնաբանությամբ: Այստեղ յեխում են այն յենթադրությունից, թե արհմիություններն սկիզբ են առնում փոխոգնության գանձարկներից ե ընկերություններից: Այստեղ ձգնում են ապացուցել, վոր Լենինի, բայլչեիկների համար «արհմիությունների հարցը ակտուալ չե», վոր, հետևաբար, արհեստակցական միությունները անտեսվում եյին, վոր կուսակցության համար արհմիությունների հարցը «կոնկրետ—քաղաքական պրոբլեմ չեր»:

Չնայած նրան, վոր Լենինը, բայլչեիկները ՌՍԴԲԿ V համագումարից դեռ չատ առաջ հստակ, բացարձակապես վորոշակի դիրք ունեյին արհմիությունների նկատմամբ, վորպիսին արձանագրված ե III համագումարի վորոշումներում, չնայած նրան, վոր Լենինը, «Ի՞նչ անել» աշխատությունում ձևակերպել եր բայլչեիզմի հիմնական աքսիոմները արհեստակցական շարժման մասին, տարերայնության ե գիտակցականության մասին, — հեղինակը «Համ Կ(բ)ի պատմություն» II հատորի 716-րդ յերեսում գրում ե. «Ռուսական սոցիալ—դեմոկրատիայում արհմիությունների քաղաքական չեզոքության հարցը կասկած չեր առաջացնում, ճիշտ այնպես, ինչպես ընդհանուր առմամբ կասկած չեր առաջացնում նաև բուրժուական քաղաքական կուսակցությունների հանդեպ թշնամական վերաբերմունքի հարցը»: Այդ նշանակում ե, վոր բայլչեիկների ե մենչեիկների միջև տարաձայնություններ չկային արհմիությունների «չեզոքության» ե բուրժուական քաղաքական կուսակցությունների հանդեպ ունենալիք վերաբերմունքի հարցերի առթիվ:

Այս ի՞նչ ե, յեթե վոչ բայլչեիզմի պատմության Փալստիֆիկացիա:

Հարկավոր ե նշել, վոր չորսհատորյակի հեղինակի պնդումը նոր չե: Այդպիսի տեսակետ եր պաշտպանում նաև ընկ. Տոմսկին, յերբ խոսում եր 1905—1906 թ.թ. հեղափոխության ժամանակ բայլչեիկների ե մենչեիկների ունեցած դիրքի մասին: Ահա թե ի՞նչ եր գրում ընկ. Տոմսկին այդ մասին.

«Այն ժամանակ (1905—1906 թ.թ.,—Ա. Զ.) մենք չէինք վիճում այն մասին՝ չեզոք են, թե՞ չեզոք չեն արհեստակցական միությունները: Այն ժամանակ մենք բոլորս կանգնած էինք դասակարգային տեսակետի վրա, այն ժամանակ մենք բոլորս, չնայած մեզ բաժանող տարաձայնություններին, բուրժուազիայի դեմ էինք դուրս գալիս» («Ընտիր հոգիածներ և ճառեր», հրատ. ՀԱՄԿՈՒ-ի, 1928 թ., էջ՝ 20, ուսու հրատ.):

Մենք էլի Այնգաֆոր նույնպես պնդում եր, վոր արհմիությունների հարցում բայլչեիկներն և մենչե-վիկներն դիրքերն միջև վոչ մի տարբերություն չկար: Այս բոլոր արտահայտություններն ողակներ են այն դիրքերի ընդհանուր շղթայում, վոր ունեյին Լենինը, բայլչեիկները՝ 1905 թ. հեղափոխություն մեջ տարե-բայնություն ու գիտակցականություն, կուսակցություն և արհմիությունների փոխհարաբերություն հարցե-րում:

Այնուհետև չորսհատորյակի նույն բաժնի հեղինա-կը, վորի մասին խոսվեց, հավատարիմ իր գրաված դիրքին, սկսում է քննադատել Լենինին: Նա գրում է. «Լենինը ավելի կամ պակաս (ընդգծումը մերն է.—Ա. Զ.) մանրամասնությամբ արտահայտվել է «չեզոքություն» մասին «Խ՞նչ անել բրոշյուրում»: Այնուհետև նա բերում է հետևյալ անձիշտ ցիտատն ընկ. Լոդովսկու «Լենինը և արհեստակցական շարժումը» գրքից (հրատ. 1925 թ.). «բայց յեթե տարեբայնություն և գիտակցականու-թյան փոխհարաբերությունների հարցի մասին այստեղ կային վոչ-քավարաք նիշտ ձևակերպումներ (ընդգծումը մերն է.—Ա. Զ.), ապա չեզոքության հարցի մասին Լենինն ընդունում եր, վոր իրոք այն ժամանակ սխալ դիրք է գրավել «(ընդգծումը հեղինակինն է): Բաժնի հե-ղինակն այս հարցի առթիվ տալիս է հետևյալ յեզրակա-ցությունը. «Լոդովսկին, իհարկե, իրավացի յե, յերբ ընդգծում է արհմիությունների մասին Լենինի ունեցած հայացքներում կատարված եվոլյուցիան, բայց արդյո՞ք այդտեղից հետևում է, վոր Լենինն ընդունում եր արհմիությունների «չեզոքությունը»: Յեվ Խ՞նչ իմաս-տով: Այս հարցերին կարելի յե պատասխանել միայն

վերլուծությամբ յենթարկելով այն իրադրությունը, վորի պայմաններում գրվել է «Խ՞նչ անել» գիրքը»:

Կասկածելի վերլուծություն կատարելով այն պայ-մաններին, վորոնցում գրվել է «Խ՞նչ անել» բրոշյուրը, հեղինակը խորիմաստորեն յեզրակացնում է. «Լենինին կշտամբել սոցիալ-դեմոկրատների հանդեպ արհմիու-թյունների «չեզոքությունը» պաշտպանելու խնդրում, չի կարելի: Բայց Լենինը չի ընդգծել (ընդգծումը մերն է,—Ա. Զ.), վոր սոցիալ-դեմոկրատիան սկզբունքորեն դեմ է «չեզոքության», վոր սոցիալ-դեմոկրատիան ընդհանրապես դեմ է չեզոքության և այն թույլ է տա-լիս միայն վորոշ, կոնկրետ դեպքում»: Յեվ այնուհե-տև. «եկոնոմիստների դեմ մզած իր պայքարում Լենինը չի ընդգծել (ընդգծումը մերն է.—Ա. Զ.), վոր «չեզոքություն» այս իմաստով հասկանում է վորպես ժամանակավոր յերևույթ բանվորական շարժման սկզբ-նական զարգացման եպոխայի համար և գլխավորապես «միությունների վրա սխալեմատիկ բուրժուական ներ-գործության բացակայություն» պայմաններում: Նա չի ընդգծել (ընդգծումը մերն է,—Ա. Զ.), վոր մարքսիզմի ընդհանուր ուսմունքի համաձայն՝ սկզբունքորեն հեղա-փոխական սոցիալ-դեմոկրատիան դեմ է «չեզոքության» (Համ Կ(բ) պատմություն, II հ., էջ՝ 720):

Ինչպես տեսնում եք, արհմիություններին վերաբե-րող ամբողջ բաժնում խեղաթյուրվում է Լենինի դիրքը, բայլչեիկների դիրքը, խեղաթյուրվում է «Խ՞նչ անել» բրոշյուրը, վորը դրել է «ուսական բանվոր դասակար-գի իրական հեղափոխական շարժման հիմքերը» (Ստա-լին):

Բայլչեիկյան պատմաբանը պետք է ջնջի նման խե-ղաթյուրումները, պայքարի Լենինի և բայլչեիկների կուսակցության հասցեյին չալրտված այս գրադարաու-թյունների դեմ:

«Մեզ մոտ դեռևս արհեստակցական միություններ չկային, յերբ կուսակցությունը և նրա կազմակերպու-թյունները արդեն իսկ դեկավարում էին բանվոր դասա-կարգի վոչ միայն քաղաքական, այլև տնտեսական պայ-

Գարր, մինչև փոքր ու փոքրագույն գործադուլները» (Ստալին) :

Լենինի և լենինյան խմբի ակտիվ մասնակցությունը 90-ական թվականների գործադուլային շարժման, բանվոր դասակարգի կուսակցությանը հնարավորություն տվեց կապիտալիզմի դեմ պայքարելու վիթխարի փորձ կուսակել: Լենինի ամիջական մասնակցությունը այդ շրջանի անտեսական պայքարի ամենից ավելի ակտուալ հարցերի լուծմանը (բազմաթիվ պրոկլամացիաներ և բրոշյուրներ կաղմելը, բանվորների կարիքների և պահանջների անմիջական ուսումնասիրությունը գործարաններում, մի շարք գործադուլների ղեկավարումը և այլն) հնարավորություն տվեց ճիշտ ու բազմակողմանիորեն ձևակերպել բանվոր դասակարգի բոլոր խնդիրները, բարձրացնելով նրանց գիտակցականության մակարդակը, բայլչելիզմի հիմունքների համաձայն:

Ահա թե ինչու բոլոր այն փորձերը, վոր կատարում էին մենչևիկները և նրանց միացող մեր ուղորտունիստ պատմարանները ապացուցելու համար, թե բայլչելիները անտեսական պայքարի փորձ չեն ունեցել, միանգամայն հողից զուրկ են: Մենչևիկ Գրինեվիչի այն պնդումը (Գրինեվիչի, վորը ՀԱՄԿՈ-ի հին ղեկավարության ժամանակ հնարավորություն եր ստացել ազատորեն պարզացնելու՝ բայլչելիզմը ֆալսիֆիկացիայի յենթարկող իր պատմական կոնցեպցիաները), թե լենինյան հոսանքը «անտեսական պայքարը մղում եր հետին պլանի վրա, նամացնում եր նրա նշանակությունը պրոլետարական պայքարում»¹, խեղաթյուրում ե բանվորական շարժման լենինյան և բայլչելիկյան ղեկավարման պատմական փաստերը:

Լենինը միմյանցից չեր կարում անտեսական և քաղաքական պայքարը, նրանցից յուրաքանչյուրն ինքնուրույն նպատակի չեր վերածում: Նա նրանց ղիտում եր սերտորեն շաղկապելով բանվորական շարժման տարբերայնության և գիտակցականության պրոբլեմին: Հեղա-

միտականների միասնական համառուսական կազմակերպություն ստեղծելու լենինյան պահանջը չի հակադրվում արհմիությունների կազմակերպությանը, այլ շաղկապվում ե այն բանի հետ, վոր կուսակցությունը պետք ե իր վրա վերցնի բանվորների համառուսական արհեստակցական միությունների ղեկավարությունը²: Ընդվորում Լենինն ասում եր, վոր «արհեստակցական միավորումը դառնում ե այնքան ավելի համառորեն անհրաժեշտ, ինչքան ավելի արագ ե առաջ դնում մեր ձեռնարկատերերի միավորումը ամեն տեսակ ընկերությունների ու սինդիկատների մեջ»: Լենինը պահանջում եր «կազմակերպել ամրակուռ կենտրոնացված միություններ», վորոնք կարողանան վոչ միայն անտադոնիզմ առաջացնել տվյալ ձեռնարկության բանվորների ու աերերի միջև, այլև իրենց միավորված բանվորների գիտակցությունը դաստիարակեն նրանց շահերի անհաշտ հակադրումով վողջ ժամանակակից քաղաքական ու հասարակական կարգերին: Իսկ «զա արդեն ըստ եյության սոցիալ-դեմոկրատական գիտակցություն ե», և «արիմիությունները դրան հասնել կարող են միմիայն հեղափոխականների նամառուսական կազմակերպության ղեկավարությամբ» (ընդգծումը մերն ե. — Ա. Զ.):

Պնդելով արհմիությունների գոյության անհրաժեշտության վրա, Լենինը միաժամանակ կուսակցությունից պահանջում եր ներգործել նրանց վրա, նրանց ամբողջ գործունեյության վրա, պահանջում եր արհմիություններն իդեապես յենթակա դարձնել կուսակցությանը: Լենինը վորպես հիմք եր առաջադրում տարերայնության դեմ պայքարելու խնդիրը, տարերայնություն, վոր ուղիղ ճանապարհով տանում ե դեպի նեղ տրեդ-յունիոնիզմը, դեպի բանվորների իդեական ստրկացումը բուրժուազիայի կողմից, դեպի տերտերական-ժանդարմական իդեոլոգիան: Լենինը ուսական սոցիալ-դեմոկրատիայի առաջ խնդիր եր դնում ամրացնել ուսական արհշարժման կապը սոցիալիզմի

¹ Гриневич.— «Профессиональное движение рабочих в России», հրատ. «Красная Новь», 1923 թ.:

² Ленин.— «Что делать?», Յերկ. ժող. IV հ., էջ 417:

³ Լենին. նույն տեղում:

հետ: Նա գտնում եր, վոր «արհեստակցական կազմակերպությունները վոր միայն կարող են ահագին ոգուշարեղ տնտեսական պայքարի զարգացման և ամրացման գործում, այլև դառնալ քաղաքական ազդեցիկի և հեղափոխական կազմակերպության աջակից»¹:

Այդ նույն շրջանում Լենինը ուսումնական սոցիալ-դեմոկրատական թերթի առաջ խնդիր դրեց իդեոլոգիայի և գործնականապես ղեկավարել արհաճարժու-մը: Նա գտնում եր, վոր «յուրաքանչյուր սոցիալ-դեմոկրատական թերթում պետք է լինի արհեստակցական (տնտեսական) պայքարի բաժին»: «Անլեզալ աշխատանքի պայմաններում արհեստակցական մամուլի ներկայումս անհրաժեշտ ձևը մեզ մոտ պետք է լինեն արհեստակցական բրոշյուրները: Այնտեղ պետք է հա-վաքել և սխառմատիկ կերպով խմբավորել լեզալ և անլեզալ նյութերը տվյալ զբաղմունքի աշխատանքի պայմանների հարցի, այդ տեսակետից Ռուսաստանի զանազան վայրերի տարբերության հարցի, տվյալ պրոֆեսիայի բանվորների գլխավոր պահանջների հարցի, նրան վերաբերող որենսդրության թերու-թյունների հարցի, այդ ցեխի բանվորների տնտեսա-կան պայքարի ցայտուն ղեկավարի հարցի, նրանց ար-հեստակցական կազմակերպության սաղմերի, ներկա վիճակի ու կարիքների հարցի և այլ հարցերի շուրջը»²:

Արհաճարժյունների կազմակերպման այս բոլոր պայմաններն ու սկզբունքները Լենինը հիմնավորել է «Что делать?» գրքում, վորը գրված է 1902 թվին, հետևաբար դեռ նախքան արհաճարժյունների մասա-յական կազմակերպումը: Լենինը տվել է արհեստակ-ցական շարժման ամրակուռ մարքսիստական-հետևվո-րական տեսությունը: ՌՄԴԲԿ յերկրորդ համագումարն իր վորոշումների մեջ ամրացրեց արհաճարժման այս լենինյան գիրքավորումները, ընդգծելով տնտեսական

¹ Լենին.—«Что делать?». Յերկ. ժողով., IV հատ., 2-րդ հրատ., էջ 471:

² Նույն տեղում:

պայքարը քաղաքական պայքարի հետ շաղկապելու անհրաժեշտությունը:

Այսպիսով, այն շրջանում, յերբ դեռևս մասա-յական արհաճարժյուններ չկային, Լենինը և լենինյան կուսակցությունն ունեյին արհաճարժման ամբողջա-կան տեսություն: Մենք տեսնում ենք պրոֆ. Յարոց-կու այն պնդման անհեթեթությունը, թե «Վլադիմիր Իլյիչ Լենինն արհաճարժման վերաբերյալ իր հայացք-ներն չի ձևակերպել արհաճարժման ուսմունքի և թեո-րիայի ամրակուռ սխառմում, հայացքներ, վորոնք չարադրված լինեյին ամրակուռ ձևով, սխառմի բեր-ված լինեյին, մենք վոչինչ չենք գտնում Վ.Ի. Լենինի աշխատությունների մեջ»: Այս պնդումը վոր այլ ինչ է, յեթե վոր մենչեիկներն մոտիվների կրկնություն, մենչեիկներ, վորոնք ինչպես ցույց տվինք արդեն վերևում, չարունակ փորձում եյին ապացուցել, վոր բայլչեիկներն իրենց տեսակետը չեն ունեցել արհ-աճարժյունների մասին, վոր բայլչեիկներն անտեսել են արհեստակցական պայքարը և վոր արհաճարժման տեսության հարցերում մոնոպոլիստ են յեղել միայն իրենք (մենչեիկները): Իրականության մեջ մենչե-վիկները փորձել են բուրժուական իդեոլոգիան քարչ տալ բանվորական շարժման մեջ և լիովին համապա-տասխան այդ խնդրին՝ ջանացել են կազմակերպել արեղ-յունիոնների և գեվերչավթների ախլի արհես-տակցական կազմակերպություններ, փորձել են ուսա-կան բանվորին դարձնել «անգլիական արեղ-յունիո-նիոտի և գերմանական սոցիալ-դեմոկրատի լղարիկ հորեղորվորդին»¹:

Լենինյան տեսությունը և բայլչեիկի պայքարը հեղափոխական իդեոլոգիայի համար բանվորական շարժման մեջ հանգեցին այն բանին, վոր մեր բանվոր քասակարգը գնաց հեղափոխական պայքարի ուղիով, վոր «մեր պրոլետարիատը դարձավ այնքան հեղափո-խական, վորքան գիտակից եր, այնպես վոր «գիտակից

¹ М. Н. Покровский.—«История пролетариата СССР», № 1.

բանվոր» և «հեղափոխական» տեսությունները մեզ մոտ, վերջապես, իրար ձուլվեցին¹։ Այդ գիտակից բանվոր-հեղափոխականին պետք է համապատասխանեյին նաև արհեստակցական կազմակերպությունները։

Նրանք պետք է հետապնդեյին վաղ թե նաղ պրեզ-յունիստական, այլ Լենինի դրած ու մշակած բոլոր պատմական խնդիրները։ Այդ խնդիրները կենսագործեցին բայլչեիկները, և նրանց ղեկավարությունը ու ակտիվ աջակցությունը ծագում առան Ռուսաստանի բանվորների հիմնական արհեստակցական միությունները։

„ՊՐՈՓԵԴԻՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿՈՄՈՆԻԶՄԻ ԴՊՐՈՑ ԵՆ“
 СС СС ԼԵՆԻՆԻ ՅԵՎ ԱՅԴ ԼԵՆԻՆՅԱՆ ԲՆՈՐՈՇՄԱՆ
 ԽԵՂԱԹՅՈՒՐՈՒՄՆԵՐԸ

«Պրոֆմիությունները կոմունիզմի դպրոց են» լեռնյան դիրքավորման նշանակությունը ներկա ետապում չի կարելի հասկանալ առանց հաշվի առնելու այն ամենաանողոր պայքարը, վոր մղել են բայլչեիկները մենչեիկների, ներկայիս սոցիալ-ֆաշիստների դեմ։ Այն պայքարը, վոր ներկայումս մղում են մեր յեղբայրական կոմկուսակցությունները պրոֆմիությունների համար, մասսաների համար, ընդդեմ սոցիալ-ֆաշիստական ղեկավարության, անպայման կարելի չէ և պետք է համեմատել ռուսական մենչեիկների դեմ բայլչեիզմի մղած պայքարին, իհարկե հաշվի առնելով այն, վոր այլ իրադրություն է, այլ պայմաններ։

Պրոֆմիություններում մեր կուսակցության մղած պայքարի փորձը բացառիկ կարևոր նշանակություն ունի այն պայքարի համար, վոր մղում են արտասահմանյան կոմկուսակցությունները պրոֆմիությունները «կոմունիզմի դպրոց» դարձնելու համար։

Բայլչեիզմի պատմությունը ցույց է տալիս, թե ինչպիսի համառությունը և հաստատակամությունը է մեր կուսակցությունը պայքարել մասսաների համար։ Ընդվորում կուսակցությունն իրենից հետ չի մղել այն բանվորներին, վորոնք առաջ գնում էին մենչեիկ-

ների հետևից, այլ մերկացնելով և բաց անելով մենչեիզմի դավաճանական դերը, նվաճում եր մենչեիկներին աղղեցություն տակ զանվող պրոֆմիություններին։ Բայլչեիկները մենչեիկներին վտարելով պրոֆմիություններից, համալսմբում եյին բանվորական մասսաներին, կրթում, դաստիարակում եյին նրանց կապիտալիզմի բռնի տապալման համար, այդպիսով պրոֆմիություններին դարձնելով պրոլետարիատի ղեկատուության համար պայքարելու դպրոց, կոմունիզմի դպրոց։ (Մեր առածի համար հատկապես բնորոշ լուսաբանություն է ծառայում այն, վոր բայլչեիկները 1913—1914 թ. թ. նվաճեցին մետաղագործների միությունը, վորը վիթխարի դեր խաղաց 1917 թ. հոկտեմբերին)։

Լենինը, բայլչեիկները անխնա մերկացնում և դիմա-կադեմք եյին անում նրանց, ովքեր հանդես գալով իմա-հեղափոխական ֆրադայով, արհամարհելով տնտեսական պայքարը, իրենց դասավորությունը վարագործում էյին «պայքարի բարձրագույն ձև» կազմակերպելու անհրաժեշտության մասին բղավելով։

Մենչեիկները ձգտում էյին այդ պրոֆմիություններին դարձնել կապիտալիզմի սոսկական ավելաբար։ 1905 թվի հեղափոխության ժամանակ նրան, դանկ-լով, վոր բուրժուազիան հեղեմոն է հանդիսանում, վարում էյին բուրժուազիայի հետ համաձայնություն կնքելու քաղաքականություն։ Ռեակցիայի և վերելքի տարիներում մենչեիկները հարձակվում էյին «գործադուլային ազարտի» վրա, հալածում էյին պրոֆմիությունների հեղափոխական պայքարը, այն փոխարե-նում էյին կուլտուրարարությունը և նրանց հափա-սարեցնում էյին լեզալ «կարգերին»։ Պրոֆմիություններում մենչեիկներին կատարած այդ ամբողջ աշխա-տանքը սերտորեն չադկապված եր հեղափոխությու-նից, պրոլետարիատի հեղեմոնիայից հրաժարվելու հետ, պրոֆմիությունները կապիտալիստական հասա-րակարգի ապարատներից մեկը դարձնելու փորձերի հետ։

Ահա թե 1909 թվին ի՞նչ եր գրում պրոֆմիու-

¹ М. Н. Покровский.— «История пролетариата СССР» № 1.

Թյուններն ինդրի մասին մենչեղմի իղելոզ Մարտովը:

«Պրոֆմիությունները չպետք է զուտ-կուտակցական նպատակների գործիք դառնան: Պրոֆչարթմանը պետք է մոտենալ առանց վորեւէ կանխակալ ֆրակցիոն-կուտակցական տենդենցների. պրոֆչարթման, արհեստակցական պայքարի և կազմակերպման հարցերը չպետք է լուծվեն կուտակցական կազմակերպությունների շահերի տեսանկյունով»:

Պնդել, թե պրոֆմիությունները կոմունիզմի դրպրոց են յեղել, անկախ այն բանից՝ նրանց բայլչեիկներն են ղեկավարել, թե՞ մենչեիկները, կարելի չէ միայն կամ լիովին խեղաթյուրելով «կոմունիզմի դրպրոցին» լենինյան հասկացողության բուն էությունը, կամ ընդունելով, վոր մենչեիկները նույալեա դաստիարակել ու կազմակերպել են միության անդամների մասսային կապիտալիզմը տապալելու համար:

Ընդունել, թե մենչեիկների ղեկավարած պրոֆմիությունները կապիտալիզմի դպրոց են յեղել, նշանակում է արգարացնել մասսաներից կտրված և պայքարի «բարձրագույն» ձևեր պահանջող ոպորտունիստներին, «չուռ տված լիկվիդատորներին» դասալիք դիրքերը: Այդ բնորոշումները խեղաթյուրում են լենինի ուսմունքը և հակասում են պրոֆչարթման մեջ բայլչեիզմի ունեցած փորձին:

Ներկայումս յեղբայրական կոմկուտակցությունների համար առաջնակարգ խնդիր է հանդիսանում հեղափոխական պրոֆչարթման ճիշտ, բայլչեիկյան ղեկավարություն սահմանելու խնդիրը: Ուստի և նրանք պետք է առանձնապես լայն չափով ոգտագործեն Համ Կ(բ)Կ-ի փորձը: Այսոր միջազգային հեղափոխական պրոֆչարթման հիմնական խնդիրն է՝ կոմկուտակցության ղեկավարության ամեն կերպ հրաիել բանվոր դասակարգի տնտեսական և քաղաքական մարտիր կապիտալի հարձակման դեմ, հանուն նգնաժամից դուրս գալու հեղափոխական յելիքի, ամենորյա և հաստատուն ղեկավարություն ցույց տալ ընդդեմ բուր-

ժուպիայի գլխավոր սոցիալական հենարանը հանդիսացող սոցիալ-ֆաշիստների, ընդդեմ միջազգային բուրժուազիայի առաջավոր ջոկատ տրոցկիզմի, ընդդեմ տվյալ ետապի գլխավոր վտանգ աջ թեքման, ընդդեմ «ձախ» սեկտանտական թեքումների, վորոնք իրենց մեկուսացնում են մասսաներից և դրանով նպաստում են սոցիալ-ֆաշիզմին:

Այս խնդիրների լույսի տակ էլ մենք պետք է տանք այն «թեորիայի» զնահատականը, թե «ռեֆորմիստական պրոֆմիությունները կապիտալիզմի դպրոց են»:

Հարկավոր է յերևան հանել, թե ի՞նչ է թաղնված այդպիսի ձևակերպման ներքո: Ուզի թե չուզի այդ «թեորիայի» հեղինակը, բայց նա ջուր է լեցնում Մերկերի գծին, վորը դատապարտել են թե՛ Կոմինտերնը և թե՛ Պրոֆինտերնը, վորը վտանգավոր է, ինչքանով վոր «ձախ»-սեկտանտական է, իրեն մեկուսացնում է բարեմտորեն մոյորված պրոլետարների, ռեֆորմիստական միությունների շարքային անդամների մասսայից: Այդ ֆորմուլան—կապիտալիզմի ընդհանուր ճգնաժամի գորգացման և խորացման ներկա պայմաններում, բանվորական շարժման մեջ հեղափոխական վերելքի ամման պայմաններում, սոցիալ-ֆաշիզմի և ամեն մի գույնի ոպորտունիզմի դեմ անողոք պայքար մղելու պայմաններում—քաղաքականորեն սխալ է ու վնասակար: Նա չի կոմնորոշում, մորելիզացիայի չի յենթարկում մասսաներին կատարելու Կոմինտերնի վորոշումները, վորոնք ընդգծում են, վոր առանձնապես «կարևոր նշանակություն ունի, պրոլետարիատի մեծամասնության նվաճման տեսակետից, տիրապետել պրոֆմիություններին, բանվոր դատակարգի իրոք մասսայական կազմակերպություններին, վորոնք կապված են նրա ամենորյա պայքարի հետ: Այնպատանքը . ռեակցիոն պրոֆմիություններում և նրանց հմուտ տիրապետումը, կազմակերպված արհեստակցական լայն մասսաների վտտահությունը ձեռք բերելը կարևորագույն խնդիրներից մեկն է հանդիսանում» (Կոմինտերնի VI կոնգրեսի սղադրական հաշվետվություն, էջ՝ 50):

Ռեֆորմիստական պրոֆմիությունների անդա-

մակցական մասսայի մեծամասնությունը նվաճել կարելի չէ միայն ամեն կերպ ամրացնելով մեր պրոֆմիութենական ուղղիցիան ռեֆորմիստական պրոֆմիություններում, այդ ուղղիցիան դարձնելով բանվորական մասսաների կազմակերպման իսկական կենտրոնը՝ ընդդեմ սոցիալ-դեմոկրատիայի, ընդդեմ ռեֆորմիստական պրոֆրյուրոկրատիայի: Մենք պետք է աշխատենք ռեֆորմիստական պրոֆմիությունների ներսում և բոլոր ռեակցիոն կազմակերպություններում, ուր դեռ մնում են բանվորների լայն խավեր» (Համ Կ(բ) Կ XVI համագումարում ընկ. Մոլոտովի տված զեկուցումից. Սղագրական հաշվետվություն, էջ՝ 423-424):

Այն բնորոշումը, թե ռեֆորմիստական պրոֆմիությունները «կապիտալիզմի դպրոց են», ըստ եյուլթյան արդարացնում է «ձախ» սեկտանտական թեքումներին, վորոնց եյուլթյունն այն է, վոր «սխալ են մոտենում ռեֆորմիստական պրոֆմիությունների անդամակցական մասսային, ի մի յեն խառնում սոցիալ-ֆաշիստական պրոֆրյուրոկրատիային և ռեֆորմիստական պրոֆմիությունների շարքային անդամներին: Շարքային բանվորների համար մշտական ու համառ պայքար մղելու փոխարեն՝ սեկտանտական-անհանդուրժողական վերաբերմունք բարեմտորեն մոլորված պրոլետարների հանդեպ, ռեֆորմիստական պրոֆմիությունների անդամներին սխառմատիկ կերպով սոցիալ-ֆաշիստական պրոֆրյուրոկրատիայից կտրելու փոխարեն՝ թե՛ մեկի և թե՛ մյուսի միատեսակ վորակավորում, համոզելու մեթոդի փոխարեն հարձակում գործելու մեթոդ, շարքային բանվորների նկատմամբ հրամայողականության և բռնի գործողությունների փորձեր, մասսաներին մոբիլիզացիայի յենթարկելու և կազմակերպելու համառ ու սխառմատիկ աշխատանքի փոխարեն՝ հեղափոխական ֆրագեոլոգիա, վորը բացահայտում է ուղարտունիստական պատիվություն և վախ՝ մասսաներից» (Պրոֆինտերնի V կոնգրեսի վորոշումներից «К новым боям» էջ՝ 31):

«Պրոֆմիությունները կապիտալիզմի դպրոց են»

բնորոշումով արդարացվում է «դժւրս պրոֆմիություններից» լողունգը, վորովհետև «կապիտալիզմի դպրոցում» կոմունիստը և հեղափոխական բանվորն անելիք չունեն:

Լենինը «Ձախության» մանկական հիմանդությունը կոմունիզմի մեջ՝ գրքում անխնա քննադատության է յենթարկել այս սեկտանտական թեքումը և ամեն կերպ մերկացրել է այն:

Ընկ. Ստալինը XIV կուսկոնֆերենցիայի արդյունքների մասին տված իր զեկուցման մեջ կործանիչ բնութագրում տվեց այդ թեքմանը: «Այնտեղ, Արեմուտրում, — ասում էր ընկ. Ստալինն այդ զեկուցման մեջ, — ներկայումս գեոեա կան առանձին կոմունիստներ, վորոնք... շարունակում են ընթանալ «դժւրս պրոֆմիություններից» հակապրոլետարական, հակահեղափոխական լողունգով: Պետք է ասել, վոր վոչ վոք չի կարող այնպես վնասել Արեմուտքի կոմունիստական շարժմանը, վորքան այդ և նման «կոմունիստները»: Այդ մարդիկ մտածում են պրոֆմիությունների վրա գրոհել «դրսից», նրանց թշնամի բանակ համարելով: Նրանք չեն հասկանում, վոր այդպիսի քաղաքականության համար բանվորները նրանց կգնահատեն հենց իբրեւ թշնամիներ: Նրանք չեն հասկանում, վոր վատ կամ լավ են պրոֆմիությունները, բայց մասսայական բանվորն այնուամենայնիվ նրանց համարում է իր ամրոցներ, վորոնք իրեն ոգնում են պահպանելու իր աշխատավարձը, բանվորական որը և այլն: Նրանք չեն հասկանում, վոր այդպիսի քաղաքականությամբ նրանք չեն հաշտեցնում, այլ վիժեցնում են՝ կոմունիստների կողմից բանվոր դատակարգի միլիոնավոր մասսաների մեջ թափանցելու գործը»:

Ահա թե ինչու «պրոֆմիությունները կապիտալիզմի դպրոց են» ֆորմուլան անողոք կերպով քննադատված ու վերացված է վորպես սխալ և քաղաքականապես վնասակար ֆորմուլա:

Այդ «թեորիան» ամենից առաջ սխառմատիկ է, այնտեղ բացակայում է պրոֆմիության դիալեկտիկական հասկացողությունը, այնտեղ արտահայտվում է

այն, վոր չեն հասկանում, թե չի կարելի մասսայա-
կան բանվորական կազմակերպութիւնը «կապիտա-
լիզմի դպրոց» դարձնել նույնիսկ յերբ ղեկավարում
են սոցիալ-Փաշիստական պրոֆբյուրոկրատները (վո-
րոնք, անկասկած, հանդիսացել են և այժմ ել հանդի-
սանում են բուրժուազիայի հենարանը): Այդ չի կարելի
անել արդեն նրա համար, վոր ամենավիթխարի հա-
կասութիւններ գոյութիւն ունեն անդամակցական մաս-
սայի և այդ մասսաների շահերը դավաճանող պրոֆ-
բյուրոկրատիայի միջև: Լենինը շարունակ ընդգծել է
ծախու պրոֆբյուրոկրատիայի դեմ անխնա պայքարե-
լու անհրաժեշտութիւնը, մասսաների համար պայքա-
րելու անհրաժեշտութիւնը: Նա ասել է, վոր պետք է
պայքարել «սխտեմատիկ կերպով, համառորեն, հաս-
տատակամորեն, համբերութեամբ պրոպագանդ և ա-
գիտացիա մղել հենց այն հաստատութիւններում, ըն-
կերութիւններում և միութիւններում, թեկուզ և ա-
մենահետադիմական, վորտեղ կա պրոլետարական կամ
կիսապրոլետարական մասսա»¹:

Ընդ վորում Լենինը ցույց է տվել—«այդ պայ-
քարը մղել անխնա և անպայման հասցնել, ինչպես մենք
հասցրինք (Խորհրդային Ռուսաստանի բայշէկինե-
րը.—Ա. Զ.), մինչև այնտեղ, վոր լիովին խայտառակ-
վեն և պրոֆմիութիւններից վտարվեն ոպորտունիզմի
և սոցիալ շովինիզմի բոլոր անուղղելի առաջնորդ-
ները»²:

Այսպիսով, «պրոֆմիութիւնները կապիտալիզմի
դպրոց են» «թեորիան» մենք պետք է մերկացնենք և
թխտենք նրա համար, վոր նա յեղբայրական կոմկու-
սակցութիւններին խանգարում է ճիշտ կողմնորոշվել
ռեֆորմիստական պրոֆմիութիւնների ներսում մաս-
սաների համար պայքարելու գործում, նրա համար,
վոր այդ «թեորիայով» փաստորեն անտեսվում են հա-
կասութիւնները պրոլետարների դասակարգի և կապի-
տալիստների դասակարգի միջև:

Ռեֆորմիստական պրոֆմիութիւնների ներսում

¹ Լենին.—Յերկերի ժողովածու, XIV հ., 3-րդ հրատ., հջ՝ 198:
² Լենին.—Յերկ. ժող. XXV հ., 3-րդ հրատ., հջ՝ 197:

«բարեմտորեն մոլորված պրոլետարների» մասսայի
համար պայքարելն, իհարկե, վոչ մի չափով չպետք է
հակադրվի անտեսական մարտերի ինքնուրույն ղեկա-
վարման լողունդին, չպետք է հակադրվի կարմիր հե-
ղափոխական պրոֆմիութիւններ կազմակերպելու
տախտիկային, այնտեղ, ուր այդ թելադրում են դասա-
կարգային պայքարի պայմանները: Այս հարցի մասին
մենք ունենք Կոմինտերնի և Պրոֆինտերնի ցուցում-
ներն ու փորձումները, վորը պետք է բայշէկիորեն
կենսագործել այն ամենորայ պայքարում, վոր մղվում
է բուրժուազիայի, սոցիալ-Փաշիստների, «հակահեղա-
փոխական բուրժուազիայի առաջավոր ավանգարդ»
տրոցկիստների և տվյալ ետապի գլխավոր վտանգը
մարմնացնող աջերի դեմ:

Դրա համար ել մենք պետք է պայքարենք պրոֆ-
միութիւնների այնպիսի մետաֆիզիկական բնորոշ-
ման դեմ, վորը հաշվի չի առնում պայքարի շարժման
ամբողջ դինամիկան, այլ մեղ հրամցնում է մարքա-
լենինյան դիալեկտիկային հակասող մերկ սխեմա,
փորովհետեւ «կոմունիստների խնդիրն է՝ կարողանալ
համոզել հեռամտացներին, կարողանալ աշխատել
նրանց մեջ, և վոչ թե յերեխայական «ձախ» լողունդ-
ներով պատ քաշել նրանց և իրենց միջև»¹:

Ի հակակշիռ այն բնորոշման, թե ռեֆորմիստա-
կան «պրոֆմիութիւնները կապիտալիզմի դպրոց են»,
Նյուլենբերգը պնդում է, վոր ռեֆորմիստական պրոֆ-
միութիւնները «կապիտալիզմի որոք ևս կոմունիզմի
դպրոց են հանդիսանում»: Ըստ Եյության այս ևս սխո-
լաստիկ բնորոշում է, վորը ջնջում է սահմանները հե-
ղափոխական և ռեֆորմիստական պրոֆմիութիւննե-
րի միջև, փոխանակ վճռականորեն ընդգծելու նրանց
սկզբունքային տարբերութիւնը: Մասսաների համար
պայքարելու մեր խնդիրները պահանջում են կատե-
գորիկ սահմանագծում անցկացնել պրոֆշարժման սո-
ցիալ-Փաշիստական և հեղափոխական դիրքերի միջև:
Իսկ Նյուլենբերգի բնորոշման համաձայն այդ տարբե-

¹ Լենին.—Յերկեր, XVI հ. 3-րդ հրատ., հջ՝ 199:

բությունը քողարկվում է, վորովհետև նա լիակա-
տար անալոգիա չէ անցկացնում մեկ կողմից կարմիր
պրոֆմիությունների, վորոնք ամբողջապես կանգնած
են կոմինտերնի և Պրոֆինտերնի դիրքերում, աշխա-
տում են կոմկուսակցության ղեկավարությամբ, մո-
րիլիզացիայի յեն յենթարկում և կազմակերպում են
մասսաներին կապիտալիզմը տապալելու համար, և
մյուս կողմից սոցիալ-ֆաշիստական պրոֆմիություն-
ների միջև, միանգամայն մոռանալով, վոր «ռեֆոր-
միստական պրոֆապարատը դառնում է շտրեյկբրե-
խերության կազմակերպիչ կենտրոն» (Պրոֆինտերնի
V կոնգրեսի թեզիսներից) :

Նյուրնբերգին չի փրկում նաև ռեֆորմիստական
պրոֆմիությունների՝ վորպես կոմունիզմի դպրոցի՝ նրա
աված ավելի ծավալուն բնութագրությունը և նրա
այն վերապահությունը, թե «պրոֆմիությունները
կոմունիզմի դպրոց են հանդիսանում այնքանով, վոր-
քանով պրոֆմիությունների ներսում հեղափոխական
թևը պայքարում է բանվորական շարժման հեղափոխա-
կան զարգացման ճանապարհի համար... վորքանով
կոմունիստական կուսակցություններն աշխատում են
պրոֆմիությունների ներսում» : Այս վերապահու-
թյունն ընկ. Նյուրնբերգին չի փրկում նրա համար, վո-
րովհետև կոմունիստի ուղղակի պարտականությունն
է աշխատել և պայքարել մասսաների համար առեկտ-
րեմ, ուր կան այդ մասսաները, այդ թվում նաև ֆա-
շիստական կորպորացիաներում, կապիտալիստական
միություններում և այլն :

Ո՛ւր է տանում ռեֆորմիստական և հեղափոխա-
կան պրոֆմիությունների միջև սահմանները ջնջող
ընկ. Նյուրնբերգի դիրքը : Նա տանում է դեպի ինք-
նուրույն տնտեսական մարտերից հրաժարվելը, դեպի
պրոֆմիութենական լեգալիզմի ձգտելը, դրա համար
էլ նա ամբողջապես միանում է հեղափոխական և ռե-
ֆորմիստական պրոֆշարժման միջև յեղած տարբե-
րությունը չտեսնող ռենեգատների ու ոպորտունիստ-
ների դիրքին :

Ահա թե ինչո՛ւ Նյուրնբերգի «ռեֆորմիստական

պրոֆմիությունները կոմունիզմի դպրոց են» «լոզուն-
դը» մեկնելիկյան լոզունգ է հանդիսանում և ամբաց-
նում է II ինտերնացիոնալի դիրքերը :

Իր նպորտունիստական դիրքը Նյուրնբերգը փոր-
ձում է արդարացնել Լենինի և Ստալինի ասածները
խեղաթյուրելու միջոցով :

Խեղաթյուրելով Լենինի «Ձախության» մանկական
հիմունքությունը կոմունիզմի մեջ» դրքից բերած այն
ցիտատը, վոր պրոլետարիատի կողմից իշխանությունը
գրավելուց հետո ևս պրոֆմիությունները մնում են
իրևե կոմունիզմի անհրաժեշտ դպրոց, նա շտապում է
անել այնպիսի յեղրակացություն, վորը բոլորովին
բաժանվում է պրոֆմիությունների՝ իրևե կոմունիզմի
դպրոցի՝ լենինյան բնորոշման ելուցյունից : Յեթե
պրոֆմիությունները «մնում են» կոմունիզմի դպրոց,
դրում է Նյուրնբերգը, — կնշանակի նրանք կապիտա-
լիզմի որոք ևս կոմունիզմի դպրոց են» :

Նյուրնբերգը ոպորտունիստական հայտնաբերում-
ներ է անում, փոխանակ լենինիստորեն մեկնաբանելու
կուսակցության դերը, փոխանակ ցույց տալու վոր
միայն կոմունիստական կուսակցության՝ իրևե ավան-
ցարդի՝ ղեկավարությամբ պրոֆմիությունները կա-
րող են կատարել կոմունիզմի դպրոցի իրենց դերը, վոր
միայն կուսակցության ղեկավարությամբ նրանք կա-
րող են գնալ դեպի սոցիալիստական հեղափոխու-
թյունը, դեպի կապիտալիզմի բռնի տապալումը, և
այսպիսով Նյուրնբերգը փոչ միայն ցցուն չի դարձնում
կոմունիստական կուսակցության դերն ու նշանակու-
թյունը, այլ ամբողջապես քողարկում է նրա ամենորյա
ու մշտական ղեկավարության նշանակությունը :

Նյուրնբերգի համար կարևոր չէ, թե ով է ղեկա-
վարում պրոֆմիությանը, դեպի ո՛ւր է գնում պրոֆ-
միության քաղաքականությունը : Նրա մոտ ստադիում
է այն, վոր բոլոր պրոֆմիությունները ամեն տեսակ
պայմաններում, ամեն տեսակ ղեկավարությամբ, ա-
մեն տեսակ քաղաքականությամբ, ամեն տեսակ (այդ
թվում նաև բուրժուական ազդեցության ներքո գտնը-
վելով «կապիտալիզմի որոք ևս կոմունիզմի դպրոց են

Հանդիսանում», չհասկանալով, Վոր պրոլետարիատի դիկտատուրայի համար պայքարելը միայն, բանվորներին այդ պայքարի համար կոմկուսակցության ղեկավարութեամբ համախմբելն ու մոբիլիզացիայի յենթարկելը միայն կարող է համապատասխանել պրոֆմիություններին՝ իբրև կոմունիզմի դպրոցի՝ լենինյան բնորոշմանը:

Իրականութեան մեջ Նյուրնբերգի ֆորմուլան արդարացնում է սոցիալ-ֆաշիզմի գործակալներին՝ աջերի դիրքը, աջեր, վորոք դեմ են տնտեսական պայքարը կոմունիստական կուսակցութեան միջոցով խնդրուրույնարար դեկավարելուն, դեմ են կարմիր, հեղափոխական պրոֆմիություններ կազմակերպելուն: Քանի վոր ռեֆորմիստական պրոֆմիությունները նույնպես կոմունիզմի դպրոց են հանդիսանում, ել ինչո՞ւ այն ժամանակ կարմիր պրոֆմիությունների խնդրուրույն կազմակերպություն: Նրանք, ըստ Նյուրնբերգի, իհարկե հարկավոր չեն, վորովհետև մեկ է մյուս միությունների միջև սկզբունքային քաղաքական տարբերություն չկա: Նյուրնբերգը, պաշտպանելով իր մենչևիկյան դիրքը, իրար է խառնել սոցիալ-ֆաշիստական իմպերիալիստական պրոֆբյուրոկրատիան և ամբողջ անդամակցական մասսան, իրար է խառնել՝ ֆաշիստական դեկավարությունից անդամակցական մասսային գրավելու համար կոմունիստների մղելիք պայքարը և սոցիալ-ֆաշիստական պրոֆբյուրոկրատներին լիովին խայտառակելու ու պրոֆմիություններից վտարելու վերջնական խնդիրը:

Մենք չպետք է քողարկենք հեղափոխական և ռեֆորմիստական պրոֆմիությունների տարբերությունը. ռեֆորմիստական պրոֆմիությունները այնպիսի ասպարեզ են, ուր պետք է պայքարել «բարեմտորեն մոլորված պրոլետարներին» մասսաներին նվաճելու համար:

Ի՞նչ բնորոշում մենք կարող ենք տալ կարմիր պրոֆմիություններին, վորոնք կանգնած են Պրոֆինտերնի դիրքերում, կատարում են նրա վորոշումները, պայքարում են կոմկուսակցութեան ղեկավարու-

թյամբ: Մենք իրավունք ունենք և պարտավոր ենք նրանց կոչել պրոլետարիատի դիկտատուրայի համար մղվող պայքարի դպրոց, կոմունիզմի դպրոց: Պրոֆինտերնի առաջին կոնգրեսը մասնանշեց, վոր հեղափոխական միությունները՝ վորպես հիմնական խնդիր՝ միշտ առաջադրել են՝ կապիտալիզմի բռնի տապալման համար մասսաներին դաստիարակելու խնդիրը: Այդ խնդիրը կապիտալիզմի քայքայման շրջանում բացառիկ կարևորություն ներկայացնող խնդիր է հանդիսանում: «Պրոֆմիությունները կոմունիզմի դպրոց են, կոմունիզմի արհեստանոց: Նրանց խնդիրն է՝ մասսաներին պատրաստել կապիտալիստական կարգեր տապալելու համար»: Այս բնորոշումը հստակ է և սպառելի: Այս, իհարկե, չի նշանակում, թե պրոլետարիատի դիկտատուրայի համար մղվող պայքարն անտեսում պայքարը բանվոր դասակարգի ամենորյա կարիքներ համար, այդպես կարող են յենթադրել միայն սեկտանտական տրամադրություններ ունեցող կոմունիստները»:

Կապիտալիզմի դեմ պայքարելու պայմաններում աշխատավարձի բարձրացման համար մղվող պայքար վերածվում է բուրժուական պետութեան դեմ ուղղված պայքարի: Դրա համար ել անտեսել բանվորների ամենորյա շահերը և քարոզել միայն «ցուլ» պրոլետարիատի դիկտատուրայի համար մղվող պայքարը, դժբախտ լողունք է, վորն անմիջականորեն տանում է դեպի կղզիացումը մասսաներից:

ՊՐՈՖՍԻՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՊՐՈԼԵՏԱՐԻԱՏԻ ԴԻԿՏԱՏՈՐԻԱՅԻ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ

Կարմիր պրոֆմիությունները վորպես կոմունիզմի դպրոց բնորոշելով վերացվում է արդյոք բուրժուազիայի տապալման, պրոլետարիատի դիկտատուրայի համար պայքարող պրոֆմիությունների վորակակատարբերությունը խորհրդային իշխանութեան, սոցիալիզմի կառուցման պայմաններում գտնվող պրոֆմիություններից: Ամենին: Մենք պետք է պարզորեն ընդ-

գծենք կոմկուսակցութեան ղեկավարութեամբ կապի-
տալիստական աշխարհի պայմաններում աշխատող
պրոֆմիությունների և պրոլետարական զիկտատուրա-
յի պայմաններում աշխատող պրոֆմիությունների վո-
րակական տարբերությունը:

Առաջինների վերջնական նպատակն է՝ տապալել
կապիտալիզմը և պայքարել պրոլետարիատի զիկտա-
տուրայի համար, յերկրորդների հիմնական նպատակն
է՝ սոցիալիստական շինարարությունը, պայքարը պրո-
լետարիատի զիկտատուրայի համար և սոցիալիստա-
կան հասարակութեան վերջնական կառուցումը:
Ընկ. Կադանովիչը պրոֆմիությունների IX համագու-
մարում ունեցած յելույթում ամէց պրոֆմիություն-
ների՝ վորպես կոմունիզմի դպրոցի՝ խորը մաքս-լե-
նինյան վերլուծությունը պրոլետարիատի զիկտա-
տուրայի պայմաններում: «Յերը մենք քննում ենք
պրոֆմիությունների խնդիրները զանազան ետապնե-
րում, մենք տեսնում ենք, վոր պրոֆմիությունների
հիմնական դերը պրոլետարական զիկտատուրայի բո-
լոր ետապներում, կոմունիզմի դպրոցի դերն է: Յու-
րաքանչյուր առանձին ետապում փոխվում են պրոֆ-
աշխատանքի բովանդակութեան առանձին տարրերը,
ձևը, բայց մնում է գլխավորը— կոմունիզմի դպրոցի
ֆունկցիան:

Հոկտեմբերին անմիջապես հաջորդող շրջանում
պրոֆմիությունները բանվորական վերահսկողութեան
կիրառմանը զուգընթաց, իրենց վրա վերցրին արտա-
դրութեան կադմակերպման և ձեռնարկութեան կառա-
վարման աշխատանքը: Պրոֆաշխատողների շարքերից
կազմվեցին հիմնականում տնտեսաօրհներ կադրերը
հեղափոխութեան առաջին տարիներում: Գործարկում-
ները, բանվորական վերահսկողութեան որդանները,
պրոֆկադմակերպությունները հանդիսացան ամէ հզորագ
զարոնդող, վորտեղ կոմունիստ խորհրդային ձեռնադ-
րությունների ապագա հրամանատարները:

Ռազմական կոմունիզմի շրջանում, պրոֆմիություն-
ային հիմնական մարքիզացիաներ անցկացնելով ֆրոնտում,

50-ամյ անցորդայն մ գոմի, 964 Ս : մյ մմմմ : բյդ մմմմմ

պարենավորման ջոկատներ կազմելով հացի համար
մղվող պայքարում, միությունները բանվորների մեջ
գործնականորեն դաստիարակեցին համադասակարգա-
յին շահերի զիտակցությունը, բանվորական առանձին
խմբերի մասնակի շահերը պրոլետարիատի ընդհանուր
գործին, խորհրդային իշխանութեան գործին զուգըն-
թեյա պարտականությունը: Շարաթորյակները և ֆրոն-
տին ղենք, հազուստ, վոտնաման, պարեն մատակա-
րարելու հերոսական աշխատանքը քաղաքացիական
պատերազմի ֆրոնտի ամրացման աշխատանքի անմի-
ջական շարունակությունը յեզան: Պրոֆմիություն-
ները հանդիսացան մի հզոր ռեզերվուար, վորից խոր-
հրդային իշխանությունը և կարմիր բանակը վերցրին
բանվոր դասակարգի գործի համար պայքարող լավա-
զույն մարտիկներին:

Նեպ-ին անցնելիս կուսակցությունը հատկապես
ընդգծեց պրոֆմիությունների դերը վորպես կոմու-
նիզմի դպրոցի»:

Հենց այդ կապակցութեամբ ել պետք է վերցնել Լե-
նինի «Չախութեան» մանկական հիվանդությունը կո-
մունիզմի մեջ» գրքից այն ցիտատը, վորտեղ ասված է.

«Պրոլետարիատի կողմից քաղաքական իշխանու-
թեան գրավումը պրոլետարիատի, դասակարգի և կու-
սակցութեան վիթխարի առաջընթաց քայլն է հանդի-
սանում: Հարկավոր է լինում ել ասելի և նոր ձևով, վոչ
թե միայն հին ձևով, դաստիարակել պրոֆմիություն-
ներին, ղեկավարել նրանց, դրա հետ միասին, սակայն,
չմոռանալով, վոր նրանք մնում են և դեռ յերկար ժա-
մանակ կմնան անհրաժեշտ «կոմունիզմի դպրոց» ու-
նախադրատարաստական դպրոց պրոլետարիատի զիկտա-
տուրայի իրադորման համար, բանվորների անհրա-
ժեշտ միավորում՝ յերկրի ամբողջ տնտեսական կառա-
վարման գործը ուստիճանաբար բանվոր դասակարգի
(և վոչ թե առանձին պրոֆեսիան' ըի) և ապա բոլոր աշ-
խատավորների ձեռքն անցկաց' ելու համար» (Լենին,
Յեղկեր, 2-3 հրատ. XXV հ., էջ' 196):

Պրոլետարիատի զիկտատուրայի պայմաններում

պրոֆմիությունների խնդիրը պետք է հանդիսանա՝ լինել կարևորագույն լծակ պրոլետարիատի մասսաներին «սոցիալիստական» շինարարության, արտադրության սոցիալիստական կառավարման գործում» (Կոմինաերների ծրագրից) ներդրավելու աշխատանքում: Դա ամենին չի բացառում անդամակցական մասսային սոցիալիստական հասարակության հաջող կառուցման համար դաստիարակելու և կազմակերպելու խնդիրը: Չի կարելի մեխանիկորեն միմյանց հակադրել այս խնդիրները, ինչպես այդ փորձում եր անել Նյուերբերգը, մեր պայմաններում պրոֆմիությունների համար իրեն գրված խափոր խնդիր առաջադրելով վարչատնտեսական կառավարման գաղտնի խնդիրը: Մեկը մյուսին չի բացառում, այլ լրացնում և պայմանավորում է: Վերոհիշյալն նոր, սոցիալիստական հասարակության գիտակից մասնակից և ստեղծող կարող է լինել միմյանց միության վերակառուցված, վերադաստիարակված անդամը: Մեր սոցիալիստական շինարարության մեջ լեցվող բանվորական նոր կազմերի վերադաստիարակման, վերակառուցման խնդիրը պրոֆմիությունների՝ վարպետ կոմունիզմի գաղափարի՝ մեծ ֆունկցիաներից մեկն է: Նույն ճառում անկ. Կազանովիչն ասա ինչ է ասել այդ առթիվ.

«Բանվոր դասակարգը մեկ տեղում չի կանգնում: Նա փոփոխվում է, աճում: Նրա մեջ լեցվում են հարյուր հազարավոր, միլիոնավոր նոր բանվորներ: Որինակ, Մոսկվայի լավագույն գործարանում—Ստալինի անվան ավտոմոբիլի գործարանում—բանվորների 90 տոկոսը նոր, յերիտաճարգ բանվորներ են, վորոնք յերեկ գեռ աշխատում էին գյուղատնտեսության մեջ: Չե՞վոր նրանց հարկավոր է դաստիարակել, վերակառուցել»:

Ընկ. Ստալինը «Լենինիգմի հարցերի չուրջը» աշխատության մեջ այսպես է գրել պրոֆմիությունների մասին.

«Պրոֆմիությունները կարելի չէ կոչել մեզ մոտ տիրող բանվոր դասակարգի կամապարփակ կազմակերպություն: Նրանք կոմունիզմի դպրոց են հանդիսա-

նում: Նրանք իրենց միջից առանձնացնում են լավագույն մարդկանց՝ կառավարման բոլոր գյուղերի, աշխատանքը ղեկավարելու համար: Նրանք իրագործում են կապը բանվոր դասակարգի կազմում յեղած առաջավորների ու հետամնացների միջև: Նրանք բանվորական մասսաներին միացնում են բանվոր դասակարգի ափանգարդի հետ»:

Մեզ բոլորիս համար կլասիկ այս ձևակերպումը բացառիկ կարևոր նշանակություն ունի—«իրագործում են կապը առաջավոր ու հետամնաց» բանվորների միջև:

Հետամնաց բանվորներ մեզ մոտ գեռ չատ կան: Մենք չպետք է չողորթրթենք բանվորներին, այդ չկա մեր բայլչեիկյան սովորութի մեջ: Պրոլետարիատի շարքերը լեցվող նոր բանվորների մասսան հաճախ ձեռնարկություններն է բերում մանր-բուրժուական մնացորդներ և տրամադրություններ: Առաջավոր բանվորները պետք է իրենց հետեից տանեն հետամնացներին: Այդ նշանակում է նրանց բարձրացնել առաջավորների մակարդակին, այդ նշանակում է չլատարանել, չհայհոյել, չծաղրել, այլ ղեկավարել հետամնացներին, նրանց դաստիարակել քաղաքականապես, տնտեսապես, կազմակերպչորեն»:

Ամենակույրս ոպորտունիստական սխալ է հանդիսանում պրոֆմիությունների արտադրական ֆունկցիաների և պաշտպանողական ֆունկցիաների հակադրումը: Հակադրման այդպիսի քաղաքականություն էր փորում ՀԱՄԿՍ-ի աջ ոպորտունիստական ղեկավարությունը: Այդ ոպորտունիստական գիրքավորումը քացահայտորեն ձևակերպել է ընկ. Տոմսկին իր «Պրոֆմիությունները նոր ուղիներում» բրոշյուրում: «Արհեստակցական կազմակերպությունների ամբողջ ուշադրությունը բանվորների պաշտպանողական-անտեսական շահերի վրա կենտրոնացնելու անհրաժեշտության փաստը,—գրում է ընկ. Տոմսկին,—խիստ հակասում է պրոֆմիությունների մասնակցությանը արդյունաբերության կառավարման գործին, վորովհետեւ չի կարելի ձեռնարկությունը առևտրական հաշվարկի

Հիմունքներով կառավարել և միաժամանակ փարձու-
րանքներով անտեսական շահերի արտահայտիչն ու
պաշտպանը հանդիսանալ»:

Տոմսի ու այս դիրքավորումն անտեսում է պրոֆ-
միտթյունների՝ փորպես կոմունիզմի դպրոցի՝ լենին-
յան հասկացողությունը պրոլետարիատի զիկապառու-
րայի պայմաններում: Այսուհի անտեսվում է պրոֆ-
միտթյունների՝ փորպես սոցիալիստական շինարարու-
թյան ահալի մասնակիցներին՝ Հիմնական խնդիրը:
Ընկ. կազմանովիչը պրոֆմիտթյունների IX համագում-
արում արտասանած նույն հաստատումն ասում էր.

«Պրոֆմիտթյունների՝ փորպես կոմունիզմի դպրո-
ցի՝ դերն ուղորտունիստներն խեղաթյուրում եյին նաև
աջ պրոֆաշիատոզներն ընկ: Տոմսի ու գլխավորա-
թյամբ: Նրանք չեյին տեսնում կոմունիզմի դպրոցի
բովանդակության մեջ կատարվող փոփոխություն-
ները պրոլետարիատի զիկապառուրայի զանազան ե-
տասրերում, հատկապես վեցակառուցման շրջանում:

Մենք ինչպան-արեցիկիստական վոզով հակադրելով
բանվորների շահերը սոցիալիստական արդյունաբերու-
թյան շահերին, պրոֆմիտթյունների պաշտպանողա-
կան շահերը նրանց՝ արտադրական աշխատանքին,
նրանք կամ առհասարակ լուրթյան եյին մատնում
պրոֆմիտթյունների դերը փորպես կոմունիզմի դպրո-
ցի, կամ միակողմանիորեն եյին մեկնաբանում կոմու-
նիզմի դպրոցի՝ իրրե համախմբման դպրոցի, սեփական
շահերի պաշտպանության դպրոցի՝ բովանդակու-
թյունը, դեն նեախով հեռեյալ լենինյան ընտրողմնե-
րը—«անտեսալարման դպրոց, կառավարման դպրոց»,
«սոցիալիստական արդյունաբերության (իսկ հեռա ա-
տիճանաբար հողագործության) դպրոց»: Այդուհից ել
այն աջակցությունը, վոր ցույց եյին ապիա նրանք
աջերի կուլակային քաղաքականությանը կուսակցու-
թյան մեջ»:

Արտադրության մեջ պրոֆմիտթյունների ահալի
մասնակցության շնորհիվ է միայն, վոր բարձրանում
է բանվոր դասակարգի նյութական բարեկեցությունը:
Մեկ ֆունկցիան սերտորեն չաղկապված է մյուսի հետ:

Մենք պետք է ընդգծենք այդ ֆունկցիաների անբաժանե-
լիությունը, նրանց դիալեկտիկական միասնությունը,
վորն իր բնորոշումն է գտնում «պրոֆմիտթյունները
կոմունիզմի դպրոց են» ֆորմուլայի մեջ: Պրոֆմիտ-
թյունների՝ իրրե կոմունիզմի դպրոցի՝ հիմնական
լենինյան զիկապառուրում, վոր արձանագրված է կու-
սակցության IX, X, XI, XIV և XVI համագումար-
ների վորոշումներում, ասում է. «Արհեստակցական
միտթյունները՝ փորպես կոմունիզմի դպրոց՝ պետք է
պայասրելեն աշխատավորական մասսաների տմենայա
կյանքի բոլոր կողմերը, աշխատավորության տմենա-
բայն մասսաներին աստիճանաբար ներգրավելով պե-
տական շինարարության գործում»:

Ներկա պայմաններում, յերբ ԽՍՀՄ պրոլետա-
րիատը ամեն գույնի ուղորտունիզմի դեմ պայքարելով
Համ Կ(բ)Կ-ի ղեկավարությամբ հաջողությամբ ան-
վարտել է սոցիալիստական եկոնոմիկայի հիմքի կառու-
ցումը, հաջողությամբ կատարում է առաջին հոն-
գամյակի 4-րդ, ավագանական տարվա պլանը, յերբ XVII
կուսկոնֆերենցիայի կողմից արվել են յերկրորդ հնգա-
մյա պլան կազմելու բայլչեկյան դիրեկտիվները, հար-
կավոր է առանձին հստակությամբ պարզել պրոֆմիտ-
թյունների դերը՝ փորպես կուսակցությանից դեպի մաս-
սաները դնացող շարժարեր փոխի, փորպես պետական իջ-
խանության ռեգերվուարի, փորպես բազմամիլիոն
պրոլետարիատի կազմակերպչի: Պրոլետարիատի զիկ-
ապառուրայի պայմաններում ևս չի կարելի մեր-
կադարանոց ձևով, վերացականորեն բնորոշել
պրոֆմիտթյունների դերը փորպես կոմունիզմի
դպրոցի, վորովհետև «կոմունիզմի դպրոցի, ի-
րենց դերը ավյալ շրջանում պրոֆմիտթյունները
գործնականում կատարում են այնքանով, վորքա-
նով (ընդգծումը մերն է, -Ս.Զ.) նրանք պրոլետարա-
կան մասսաների ղեկավարն են հանդիսանում կոմունիս-
տական պրակտիկայի գործում, այսինքն՝ տնտեսու-

1 Լենին, Յերկեր, 2-3 հրատ., ԿՂ 542, գլ. 26, ՀամԿ(բ)Կ
X համագումարի բանաձևից:

թյունը կոմունիստական սկզբունքներով գործնականորեն վերակազմելու և կառուցելու գործում: Խորհրդային Ռուսաստանում միայն այն միությունն է կոմունիզմի իսկական դպրոց հանդիսանում, վորը կարողանում է աշխատավորության ամենահետամնաց խավերին աստիճանաբար ներգրավել խորհրդային ժողովրդական տրանսֆորմացիայի գիտակից բարեփոխման աշխատանքին»¹:

Մասլալուն սոցիալիստական շինարարության շրջանում միայն այն պրոֆմիությունն է կոմունիզմի դպրոց հանդիսանում, վոր հաջողությամբ կազմակերպում է մասսաներին և մոբիլիզացիայի յենթարկում հնգամյակի չորրորդ և վերջին տարվա ծրագրի հաջող կատարման, ընկ. Ստալինի վեց ցուցումների իրադրոժման համար, իսկ «պրոֆմիությունների համար ընկ. Ստալինի վեց ցուցումների մեջ ամենադժվար ու վրձնական են հանդիսանում աշխատավարձի և աշխատանքի նորմավորման, աշխատանքի պաշտպանության, մատակարարման և պլանային հարցերը: Հենց այդտեղից է, վոր պրոֆմիությունները պետք է «գնան» դեպի արտադրական հարցերը» (Կազանովից):

Պրոֆմիությունների կարևորագույն խնդիրն է՝ ակտիվ կերպով պատրաստել յերկրորդ հնգամյակի պլանը: XVII կուսկոնֆերենցիան ընդունեց, վոր «յերկրորդ հնգամյակի հիմնական քաղաքական խնդիրն է՝ վերջնականապես վերացնել կապիտալիստական ելեմենտները և առհասարակ դասակարգերը, ամբողջապես վոչնչացնել դասակարգային տարբերություններ ու չահագործում ծնող պատճառները, հաղթահարել կապիտալիզմի մնացորդներն եկոնոմիկայում և մարդկանց գիտակցության մեջ, յերկրի ամբողջ աշխատավոր ազգաբնակչությանը վերածել անդասակարգ, սոցիալիստական հասարակության գիտակից ու ակտիվ կառուցողներին»:

Այս պատմական խնդրի կատարման համար անհրաժեշտ է ամենահամառ պայքար մղել տնտեսական շինա-

րարության բայլեիկյան տեմպերի համար: Պահանջվում է ել ավելի բարձրացնել բանվոր դասակարգի բազմամիլիոն մասսաների հեղափոխական ակտիվությունը յերկրորդ հնգամյակի համար մղվող պայքարում, նոր պայմաններում դժվարությունների հաղթահարման համար մղվող պայքարում:

Յերկրորդ հնգամյակի պլանները կատարվելու յեն վճռական դասակարգային պայքարի պայմաններում, և վոչ թե համապատասխան զարգացման սահուն ընթացքի աջ ուղորտունիստական «թեորիային» (վորը դասակարգային պայքարի մարման թեորիայի քողարկված ձևն է): Այլընդ դասակարգների վոչնչացումը տեսնում են «դասակարգային պայքարի մարման և սոցիալիզմի մեջ կապիտալիստների ներածման» (Ստալին) ճանապարհով: Դրանով իսկ նրանք կապերը խզում են լենինիզմից, վորովհետև հիմնական լենինյան դրույթը դասակարգերի վերացման մասին՝ ասում է, թե դասակարգերը վոչնչանում են միայն ամենամոտոք դասակարգային պայքարի միջոցով:

Սահուն զարգացման, դասակարգային պայքարի իջնող կորագծի աջ ուղորտունիստական թեորիան դեմոբիլիզացիոն թեորիա չէ, այդ վճռական պատմական պայքարում բանվոր դասակարգի գինաթափման թեորիան է: Յերկրորդ հնգամյակում դասակարգերը կվերացվեն անողոր դասակարգային պայքարում, դասակարգային տարբերություններ ծնող պատճառները վերացնելու, եկոնոմիկայում և մարդկանց գիտակցության մեջ կապիտալիզմի մնացորդները հաղթահարելու ճանապարհով:

Յերկրորդ հնգամյակում մենք պետք է չարունակենք անխնայ պայքարն ընդդեմ տվյալ ետապի դժվարությունների աջ ուղորտունիզմի, ընդդեմ «ձախ» ուղորտունիստների, ընդդեմ հակահեղափոխական տրոցիկիզմի օեցիկիվների:

Սոցիալիստական Խորհրդային Միությունը պետք է ունենա առաջավոր տեխնիկա, պետք է տեխնիկապես գինվի, վորպեսզի տպահովի իր տնտեսական ինքնուրույնությունը: XVII կուսկոնֆերենցիան ընդգծեց, վոր

¹ Լենին, Յերկիր, 2-րդ հրատ., 'XXV հ. 542, Համկ(բ)՝ X համագումարի բանաձևից:

— Զյերիւորդ հնգամյակի հիմնական ու վճռական տնտեսա-
կան խնդիրն է հանդիսանում վողջ ժողովրդական տըն-
տեսութեան վերականգնման ավարտումը, ժողովրդա-
կան տնտեսութեան բոլոր հյուղերի համար նորագոյն
տեխնիկական պատվանդան ստեղծելը»:

Այս հիմնական ու վճռական տնտեսական խնդրի
կատարումը յերիւորդ հնգամյակում պահանջում է ան-
շեղօրեն կիրառել ընկ. Ստալինի վեց պայմանները:
Պայքար տնտեսաշուկայի համար, տեխնիկայի տիրապե-
տան համար մեր տնտեսական կազմերի կողմից, բան-
ագործներից և կոլտնտեսականներից տեխնիկական խնդ-
րիզենցիա ստեղծելու համար, պայքար դիմագրկութեան
և համարակցման դեմ—ահա յերիւորդ հնգամյակում
մեր հաղթանակների և սոցիալիստական հասարակու-
թեան վերջնական կառուցման անհրաժեշտ պայմանները:

Յերիւորդ հնգամյակի այս խնդիրների հետ սերտո-
րեն կապված է նաև ամբողջ աշխատավորութեան նյու-
թական-կենցաղային մակարդակը բարձրացնելու խնդ-
րը: XVII կուսկոնֆերենցիան դիրեկտիվ տվեց՝ յերի-
ւորդ հնգամյակի վերջում յերկու-յերեք անգամով ա-
վելացնել սպառման առարկաների քանակը:

Սոցիալիզմի այս բոլոր հաջողութեանները յերի-
ւորդ հնգամյակում «բանվոր դասակարգը կապահովի
միայն պայքարելով կապիտալիզմի մնացորդների դեմ,
անխնայ հակահարված տալով կործանվող կապիտալիս-
տական ելեմենտների դիմագրութեանը, հաղթահարելով
բուրժուական ու մանր-բուրժուական նախադաշտում-
ները աշխատավորութեան մեջ և նրանց սոցիալիստա-
կան վերագոյացարակման հաստատակամ աշխատանք
կատարելով»:

Պրոֆիտութեանների գերն այստեղ վիթխարի յե-
ռոնես անխուսափելի յե դասակարգային պայքարի
սրումը առանձին մոմենտներում և սոցիալիստական
շինարարութեան առանձին ճակատամարտում: Այդ
միաժամանակ ընդդէմ է, վոր անխուսափելի յե
բուրժուական ազդեցութեանների պահպանումը, իսկ
վորոչ գեղեքերում նաև սրումը աշխատավորութեան ա-
ռանձին խավերի ու խմբերի վրա, անխուսափելի յե դեռ

— յերկար ժամանակվա ընթացքում պրոլետարիատին
խորթ դասակարգային ազդեցութեանները թափանցումը
բանվորների և անդամ կուսակցութեան մեջ: Այդ նկա-
տաւումով, կուսակցութեան առաջ խնդիր է դրվում՝
ամրացնել պրոլետարիատի դիկտատուրան, հետագա-
յում ևս պայքար ծավալել ընդդէմ ոպորտունիզմի և
հատկապես ընդդէմ աջ թեքման՝ վորպես ավյալ ետա-
պի գլխավոր վտանգը»:

Չի կարելի դասակարգերի վերացումը կապել պե-
տութեան մահացման հետ մեխանիկորեն, առանց հա-
կանալու կուսակցութեան XVI համագումարում ընկ.
Ստալինի առաջադրած այն հիմնական դրույթը, թե
պետութեան մահացման ճանապարհն անցնում է պրոլե-
տարական դիկտատուրայի պետութեան ամրացման մի-
ջոցով: Չի կարելի անգոսակարգ, սոցիալիստական հա-
սարակութեան կառուցումը բաժանել պրոլետարական
դիկտատուրայի՝ իրեն դասակարգերի վերացման հզոր
լծակի՝ ամրացումից: Մենք առանձնապես աչալուջ ա-
պարդորոչ պետք է լինենք այս հարցերում, վորովհետեւ
անդասակարգ հասարակութեան կառուցման ժամանակ
պետութեան մահանալու լողունդից այժմ փորձում են
կառուել դասակարգայնորեն խորթ ելեմենտները, վո-
րոնք սիրով են յուրատեսակ հետեւում պրոլետարական
պետութեան «ազատ մահացման» համար հենց այն
պատճառով, վոր նա պրոլետարական է:

«XVII կուսկոնֆերենցիան միանգամայն իրավացի
լեր, յերբ ընդդէմ էր, վոր «անխուսափելի յե բուր-
ժուական ազդեցութեանների պահպանումը, իսկ վո-
րոչ դեպքերում նաև սրումը աշխատավորութեան ոտան-
ձին խավերի ու խմբերի վրա, անխուսափելի յե դեռ
յերկար ժամանակվա ընթացքում պրոլետարիատին
խորթ դասակարգային ազդեցութեանների քափան-
ցումը բանվորների և անգամ կուսակցութեան մեջ: Այդ
նկատուումով, կուսակցութեան առաջ խնդիր է դրվում՝
ամրացնել պրոլետարիատի դիկտատուրան, հետագա-
յում ևս պայքար ծավալել ընդդէմ ոպորտունիզմի և
հատկապես ընդդէմ աջ թեքման՝ վորպես ավյալ ետա-
պի գլխավոր վտանգը»:

ինչպես տեսնում եք, մենք բայլչեիկորեն, լենինիստորեն ենք հասկանում անդառակարդ, սոցիալիստական հասարակության համար պայքարելը:

Մենք այդ գուգորդում ենք պրոլետարական դիկտատուրայի ամբացման խնդրի հետ: Հետևաբար ամեն ինչում է նաև պրոֆմիությունների դերը՝ վորպես պրոլետարական դիկտատուրայի վողնաշարի, վորպես կոմունիզմի զարգացի, վոր վերադաստիարակում է տասնյակ միլիոնավոր աշխատավորների և նրանց դարձնում «անդառակարդ, սոցիալիստական հասարակության դիտակից ու ակտիվ կառուցողները»: Վորպեսզի նրանք դառնան անդառակարդ սոցիալիստական հասարակության գիտակից կառուցողներ, անհրաժեշտ է «համապատասխան ձևով դաստիարակել բանվորական լայն մասսաներին» (Կազանովիչ):

Յերկրորդ հնգամյակի հաջող իրագործման համար մղվելիք հաղթական պայքարում արհեստակցական միությունները կուսակցության ղեկավարությամբ պետք է լինեն բաղամիլիոն պրոլետարիատի խակական բայլչեիկյան կազմակերպիչներն ու ղեկավարները:

XVII կուսկոնֆերենցիան անխախտ վստահություն արտահայտեց այն բանում, վոր բանվոր դասակարգը և կոլոնտեսական մասսաները կդառնան «հանձինս կուսակցական, կոմյերիտական, արհեստակցական և խորհրդային կազմակերպությունների՝ յերկրորդ հնգամյակի իրագործման համար մղվելիք հաղթական պայքարի բայլչեիկյան կազմակերպիչներ ու ղեկավարներ»:

Յերկրորդ հնգամյակն ամբողջ սրությամբ պրոֆմիությունները՝ վորպես կոմունիզմի զարգացման կերպ ամբացնելու անհրաժեշտությունն է առաջադրում:

Մեծագույն վնաս կարող է հասցնել կազմալուծիչ դատողությունները պրոֆմիությունների ֆունկցիաների «մահացման» մասին, պրոֆմիությունների և պետորդանների միաձուլման մասին, յերկրորդ հնգամյակում պրոֆմիությունների լիակատար պետականացման մասին, միասնական միության ստեղծման մասին և այլն: «Ինքնին հասկանալի չէ, վոր այն խոսակցու-

թյունները, թե յերկրորդ հնգամյակում անդառակարդ հասարակության կառուցման հետևանքով պրոֆմիություններն ավելորդ կդառնան, — ամենափոքրիկ իսկ քննադատության չեն դիմանում» (Կազանովիչ): Պակաս վնասակար չէ նաև այն տեսակետը, վորը պնդում է, թե պրոֆմիությունները դերը յերկրորդ հնգամյակում կենտրոնացվելու չէ բացառապես փառաստեղծական կառավարման մեջ, ընդ վորում անտեսելով արհեստակցական միությունների դաստիարակչական դերը և նրանց պայքարը բյուրոկրատական մեղադրանքի դեմ: Այդպիսի տրամադրությունները պետք է հանդիպեն ամենամանր քննադատության և հակադրվածի:

Պրոֆմիությունները, վորպես ամենաբարձր մասնաշաղկան բանվորական կազմակերպություններ, պետք է բանվոր դասակարգին մոբիլիզացիայի յենթարկեն յերկրորդ հնգամյակի կատարման համար: Յերկրորդ հնգամյակը պրոֆմիություններից՝ վորպես կոմունիզմի զարգացի, պահանջում է ավելի ակտիվ ու անմիջական մասնակցություն ունենալ տնտեսական շինարարությանը:

Այս պայմաններում էլ ավելի ակտուալ ու ռելիեֆ ձևով առաջին պլանի վրա չէ դրվում կուսակցության XI համագումարում ձևակերպված և կուսակցության XVI համագումարի կողմից ընդգծված Լենինի այն ցուցումը, թե «պրոֆմիությունները պետք է լինեն պետական իշխանության ամենամոտիկ և անհրաժեշտ աշխատակիցը, պետական իշխանություն, վորին նրա սմբողջ բաղադրականն ու տնտեսական աշխատանքում ղեկավարում է բանվոր դասակարգի գիտակից ավանգարդը կոմունիստական կուսակցությունը: Լինելով ընդհանրապես կոմունիզմի զարգացման, պրոֆմիությունները պետք է լինեն մասնավորապես սոցիալիստական արդյունաբերության (իսկ հետո աստիճանաբար հողագործության) կառավարման զարգացման բոլոր բանվորների համար, իսկ ապա նաև բոլոր աշխատավորների համար» (Համ Կ(բ) XVI համագումարի սղադրական հաշվետվություն, հջ՝ 736):

Յերկրորդ հնգամյակը տալիս է բանվոր դասակար-

գի քանակական և փոքրական մեծ աճում: Բանվորական միլիոնավոր շարքերը մեր շինարարության մեջ, մեր ծանր և թեթև արդյունաբերության մեջ, իր'նց գոլթավոր մասնալուծ լրացվելու յեն գյուղից յեկող կոտորնտեսականների հալվին: Պրոֆմիությունների ամենատառաջին խնդիրն է՝ այդ ամբողջ մասնալուծ լ'ցնել իրենց շարքերը և վերադաստիարակել: Յերկրորդ հիմնական լուծումն է՝ պրոֆմիությունները միավորելու յեն 36 միլիոն անդամ (1932 թ. 16-17 միլիոնի դիմաց):

Այստեղ անհափ աճում է պրոֆմիությունների դերը այդ նոր կազմերի վերադաստիարակման գործում: Արհեստակցական միությունները նրանց պետք է պատվաստեն աշխատանքի նկատմամբ կոմունիստական վերաբերմունք, նրանցից մշակեն սոցիալիզմի ակտիվ և գիտակից կառուցողներ: Հիմնական միջնախավերն այն կազմերի, վորոնք յերկրորդ հնգամյակում, ինչպես սասցինք, հիմնականում հոսելու յեն գյուղից, իրենց հետ միասին պրոլետարիատի մեջ կրեքեն մանր-բուրժուական տրամադրված յուններ, մանր-բուրժուական մնացորդներ: Այդ մանր-բուրժուական տարրերի ունեցիկները կարաահայտվեն (և այժմ արտահայտվում են քանվորական առանձին խմբերում) պոկողական տրամադրված յունների, անկարգապահության, աշխատանքի նկատմամբ վոչ-կոմունիստական վերաբերմունքի մեջ: Այդ մանր-բուրժուական տարրերի հայտնաբերումը հակահուսակցական, հակապետական տրամադրված յունների մեջ, դասակարգային պայքարի յուրահատուկ ձև է: Այդ տրամադրված յունների ունեցիկները կարտահայտվեն պրոֆմիությունների այն ողակների վրա, վորտեղ դասակարգային աչալրծությունն անրավարտր է, վորտեղ վճռական պայքար չի մղվում պրոֆչարթման աջ ուղիով: Երկրորդ հիմնական էլեմենտների դեմ, վորտեղ չկա լատականաչափ ամուր կուսոնիստարություն:

Վերադաստիարակել միության նոր անդամների կողքեր, պայքարել սոց'ալիստական կարգադրահության համար, արմատախիլ անել կապիտալիստական անցյալի մնացորդները, միլիոնավոր քանվորներին մարքս-լենինյան թեորիայով զինել պրոֆմիություններ:

Երկրորդ են միայն կուսակցության ղեկավարությամբ պայքարելով աջ ուղիով: Երկրորդ են, պայքարելով «ճախ» պրոֆմիության ղեմ, պայքարելով հակահեղափոխական տրոցկիզմի ունեցիկներին դեմ:

Պրոֆմիությունների առաջնահերթ խնդիրը յերկրորդ հնգամյակում ևս մնում է պայքարը հավասարեցման դեմ: Հավասարեցման տենդենցները կրողներ կզրտեն արդյունաբերությունը նոր մտնող մանր-բուրժուական էլեմենտների մեջ:

Բոլոր աշխատավորների նյութական-կենցաղային մակարդակի բարձրացումը, սպառման առարկաների յերկու-յերեք անգամով ավելացումը վոչ մի դեպքում չպետք է դնահատել վորպես հավասարեցման ուղի, վորովհետև յերկրորդ հնգամյակն ավարտելուց հետո ևս նրանք բաշխվելու են ըստ աշխատանքի և վոչ յերրեք ըստ պահանջների: «Քանի դեռ չի հասել կոմունիզմի «բարձրագույն» փուլը, սոցիալիստները պահանջում են պետության ամենախիստ վերահսկողությունը աշխատանքի չափի և պահանջի չափի վրա» (Լենին): Ձի կորելի մոտանալ հիմնականը, վոր «բաշխման յեղանակն է յականապես կախված է բաշխման յենթակա իրերի քանակից» (Ենգելս): Բանվոր դասակարգի նյութական-կենցաղային գրության բարձրացման համար մղվող պայքարը պետք է զուգորդվի այն պայքարի հետ, վորը մղվում է աշխատանքի բարձր վորակի համար, խոտանի յիստատար վոչնչացման համար, ֆաբրիկատների ինքնարժեքի իջեցման համար, յերկրորդ հնգամյակի արտադրական առաջագրությունների գերակատարման և գերազանցման համար:

Յերկրորդ հնգամյակում պրոֆմիությունների վոչ-պակաս կարևոր խնդիր է մնում անտահալարի, տրոտսկիստական բրիգադների համար պայքարելը, վորովհետև «անտահալարի սկսրունքի կիրառումը վոզ տրենտեսական աշխատանքում կարևորագույն ստիմուլ է հանդիսանում մեր անտեսության մեջ գտնվող վիթխարի և դեռ չողտադործված, բայց սոցիալիստական կուտակման արագացմանը նպաստող ներքին ունեցիկները: Հայտնաբերվու համար, և գրանով իսկ կամրացնի

վող սոցիալիստական շինարարութեան նյութական պատմանդանը» (ընկ. Մոլոտովի զեկուցման առթիւ XVII հումիոնֆերենցիայի ընդունած բանաձևից) :

Այսպիսով մենք աեսնում ենք, վոր յերկրորդ հընդարձակում եւ պրոֆմիություններին՝ վորպէս կոմունիզմի դպրոցին՝ դերը կմնա տմարդ ուժով, իր ամբողջ ռազմապիտութեամբ կարահարմար պրոֆմիություններին դերին եւ խնդիրներին դուգորդումը պրոլետարիատի գիկտատուրայի շրջանում : Կատարելով այդ խնդիրները, իՍՄ պրոֆմիությունները մնում են իբրեւ կոմունիզմի դպրոց : Դեռեւ 1921 թ. պրոֆմիություններին վերաբերյալ դիսկուսիայում Լենինը մերկացնելով կուսակցութեանը թշնամին՝ Տրոցկու, Շլյապնիկովին եւ Բուխարինին՝ դերքերը պրոֆմիություններին վերաբերող հարցերում, ասում եր. «վոչ թե մեկ կողմից՝ դպրոց, իսկ մյուս կողմից՝ ինչ վոր ուրիշ բան», այլ բոլոր կողմերից, տվյալ վեճում, Տրոցկու կողմից հարցի/ նման դրման պայմաններում պրոֆմիությունները դպրոց են, միախորման դպրոց, համերաշխութեան դպրոց, սեփական շահերի պաշտպանութեան դպրոց, տնտեսավարման դպրոց, կառավարման դպրոց» (Լենին, Յերկեր, 2-3 հրատ. XXVI հ., էջ՝ 136) :

«Տրոցկին փորձում եր պրոֆմիությունները դարձնել տնտմարմիններին կից բոլորակրատական ոժանդակ ուղարատ, ինչ-վոր միջին բան քաղրածիններին եւ աշխուկոնոմիկայի բաժիններին միջև : Շլյապնիկովին իրենիո ներկայացնում եր տրոցկիստական դրամին հակառակ կողմը, ի հակակշիռ պրոֆմիությունների տրոցկիստական «պետականացմանը», առաջարկում եր «միութենականացնել» պետությունը, արդյունարեութեան կառավարումը հանձնելով պրոֆմիություններին ձեռքը, այսինքն՝ դարձյալ վոչնչացնել պրոֆմիությունները վորպէս կոմունիզմի դպրոց» (Կազանովիչ) :

Պրոֆմիություններին՝ վորպէս կոմունիզմի դպրոցին՝ դերը դեռ յերկար շրջանում կմնա նաեւ սոցիալիզմի ժամանակ, քանի դեռ «աշխատանքի բաժանումը, այսինքն՝ վորոչ աշխատանքային ֆունկցիաների ամբարցումը մարդկանց վորոչ խմբերին, դեռեւ չի վերացված

եւ մասնավորապէս դեռեւ հիմնականում չի վոչնչացված տարրերությունը մտավոր եւ ֆիզիքական աշխատանքների միջև» (Կոմինտերնի ծրագրից) :

Պրոֆմիություններին մոտենալով իբրեւ կոմունիզմի դպրոցին, Լենինը «Ձախութեան» մանկական հիվանդությունը կոմունիզմի մեջ՝ գրքում գրում եր, վոր հենց պրոֆմիությունների միջոցով մենք սոցիալիզմին յերկրում «կանցնենք մարդկանց միջև աշխատանքի բաժանումը վոչնչացնելուն, բազմակողմանիութեան գարգացած եւ բազմակողմանիորեն պատրաստված մարդիկ դաստիարակելուն, սովորեցնելուն եւ պատրաստելուն, մարդիկ, վորոնք կարողանան ամեն ինչ անել : Դեպք այդ ե գնում կոմունիզմը, կգնա եւ կհասնի» :

Այս պատմական խնդրի լուծմանը հաջողութեամբ հասնելու համար պրոֆմիությունը կուսակցութեան գեկավարութեամբ պետք ե բայլելիկորեն կատարի պրոֆմիությունների IX համագումարի վորոշումները, վորոնց մեջ լենինիստորեն ձեակերպված են պրոֆմիությունների խնդիրները, դիրքավորում ե տրված՝ ցրիվ չգալ աշխատանքում, այլ գտնել հիմնական ողակը :

Աշխատավարձ, աշխատանքի նորմավորում, մատակարարման հարցեր, բնակչիկարարարւթյան հարցեր՝ աւսւ այն հիմնական ողակները, վորոյ համար պրոլետարիատը ե նրա կուսակցութեան իրավաւե ունեն զրոֆմիություններից ավելի պահանջելու, քան պրոֆաշխատանքի վորեւե այլ բնագավառի համար : Այս չի նշանակում, թե պրոֆաշխատողները հետ են մղվում արտադրութեան ղեկավարութեան մասնակցելուց, նրանք պետք ե անպայման մասնակցեն արտադրութեան ղեկավարմանը ե մասնակցեն ավելի՛ շատ ու ավելի՛ սեփով կերպով, քան այժմ, բայց արտադրութեան հարցերին նրանք պետք ե մոտենան, մեկնելով առավելապէս աշխատավարձի, աշխատանքի կազմակերպման, մատակարարման, բնակարանի հարցերից, բանվորական արտադրական խորհրդակցությունների աշխատանքից, հարվածայինների առաջարկների ե սոցմրցման արտադրանքների հաշվառումից» (Կազանովիչ) :

Մենք մեր աշխատանքում պետք ե հիշենք, վոր

«պրոֆմիությունները յերեսով դեպի արտադրություն» լողունգը, վորը հիմնականն է պրոֆչարժման մեջ աջերի գեմ պայքարելու գործում, իր ամբողջ ուժով մնում է նաև տվյալ ետապում: Սակայն սխալ կլիներ այն հասկանալ վորպես տնտնարմինների ամբողջ աշխատանքի կրկնողությունը պրոֆկազմակերպությունների կողմից: Յուրաքանչյուր կազմակերպություն ունի իր հիմնական ողակը, իր յուրահատուկ մտեցումը: Յեթե պրոֆաշխատողը տնտնավարի հետևից-ընդհանուր իրաքեր կրկնի արտադրական կարիքների, պորլեմների, տվյալ ձեռնարկության նվաճումների մասին, այդ դեռևս չի նշանակում, թե նա յերեսով դարձել է դեպի արտադրություն: Իր սեփական պրոֆաշխատանքում յերեսով դառնալ դեպի արտադրություն, այդ նշանակում է աշխատախարձի, աշխատանքի նորմալորման, մատակարարման, բնակչինարարության հարցերում լինել առաջին տեղում:

Պրոֆաշխատողները աշխատախարձի և առերիկեկացիայի, նորմալորման և աշխատանքի պաշտպանության հարցերից պետք է «դնան» դեպի արտադրության ընդհանուր հարցերը, բանվորների կոնկրետ կարիք եւր շաղկապելով սոցիալիստական արդյունաբերության շահերին» (Կազանովիչ):

Կատարելով այս հիմնական պայմանները, մեր պրոֆմիությունները պորլետարիատի գեկտատուրայի սրտք յեղել են, ևն և կլինեն կոմունիզմի իսկական զպրոց:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1-ին դասի ալիյի խորացում մեակման համար

1. Կոմունիստական մանիֆեստ, «Բուրժուաներ և պորլետարներ» գլուխը:

2. Կոմինտերնի ծրագիր, Պրոֆմիությունների վերաբերյալ բաժինը:

3. Ленин «Что д-ать?», Յերկ., Ժող., 2-3 հրատ., IV հ., էջ 56, 58, 382, 446, 458:

4. Համ Կ(բ)Կ ծրագիր, պրոֆմիությունների վերաբերյալ բաժինը:

5. Ленин, О профессиональных союзах. Յերկ. Ժող., հրատ. 2-3, XXVI հ., էջ 63-81:

6. Կուսակցության XVI համագումարի բանաձևը ընկ. Շվեդենիկի գեկուցման առթիվ:

7. Ստալին, Լենինիզմի հարցերը, 1930 թ. հրատ. (ռուս.), էջ 141-145:

8. История пролетариата СССР, №5 Ժողովածու Միլլաեյնի հոգվածը:

9. Ստալին, նամակ «Պորլետարիայա և գեկուցիա» Ժուրնալի խմբագրությանը:

10. Կազանովիչ, Կարմիր Պրոֆետուրայի Ինստիտուտի տասնամյակին նվիրված նիստում արտասանած ճառը:

11. «Պրավդա», 12/1-1932 թ., Կարմիր Պրոֆ. Ինստ. բրիգադի հոգվածը:

12. Նյութերը ընկ. Միլլաեյնի «Պրոֆչարժման թեորիայի և պատմության ֆրոնտի վրության մասին» գեկուցման քննարկման համար:

13. Ընկ. Կազանովիչի ճառը պրոֆմիությունների IX համագումարում:

14. Պրոֆմիությունների IX համագումարում ՀԱՄԿԽ-ի հաշվետվության առթիվ ընդունված բանաձևը:

15. Ընկ. Շվեդենիկի գեկուցումը պրոֆմիությունների IX համագումարում:

ԿՈՆՏՐՈՒ ՀԱՐՑԵՐ

(Հեռախոյիներ զրավար աշխատանքի համար)

1. Ի՞նչ վերաբերմունք ունեն Մարքսը և Ենգելսը պրոֆմիությունների նկատմամբ:

ա) Մարքսը և Ենգելսը յերկու ֆրոնտով պայքարում (ընդդեմ Լասալյանականության և տրեդ-յունիոնիզմի):

բ) Մարքսը և Ենգելսը պրոֆմիությունների մասին I Ինտերնացիոնալի վորոշումներում:

գ) Պրոֆմիությունների մասին Մարքսի-Ենգելսի ուսմունքի խեղաթյուրումները:

2. Լենինի և բայլզեիկների ուսմունքը պրոֆմիությունների մասին:

ա) Ի՞նչպես եր Լինինը վերաբերվում բանվորի ղառակարգային պայքարին.

բ) Ինչպես եր Լենինը վերաբերվում պրոլետարիատի տնտեսական և քաղաքական պայքարին:

գ) Ռուսաստանի պրոֆմիությունների կազմակերպման առանձնահատկությունները և Լենինի ու բայլզեիկների դերը այդ կազմակերպման գործում (պատասխանել ըստ Ստալինի):

դ) Պրոֆմիությունների լենինյան ուսմունքի զաթյուրումը մենշեիկների և ոպորտունիստների կողմից (Գրինեվիչ և մյուսները, Յուրոցկի, Տոմսկի):

3. Պրոֆմիությունների դերն ու խնդիրները միջին պրոլետարիատի գիկտատուրան և պրոլետարիատի գիկտատուրայի խամանակ. նրանց տարբերությունը.

ա) Ի՞նչպիսի պայմաններում պրոֆմիությունները կոմունիզմի դպրոց են հանդիսանում.

բ) Ինչո՞ւ ուֆորմիստական պրոֆմիությունները վորպես «կոմունիզմի դպրոց» բնորոշելը մենշեիկյան է:

գ) Ինչո՞ւ ուֆորմիստական պրոֆմիությունները վորպես «կոմունիզմի դպրոց» բնորոշելը «ձախություն» է:



Պետրատի տպարան.

Սրբադրեց՝ Մ. Դեորդյան

Պատվ. № 3294

Գլավլիտ. № 9054

Տիբամ 1000

Հանձնված է արադդրության. 26 հոկտեմբերի 1932 թ.

Ստորագրված է ապագրիտ. 26 դեկտեմբերի 1932 թ.

<< Ազգային գրադարան



NL0193073

